A-PDF DjVu TO PDF DEMO: Purchase from www.A-PDF.com to remove the watermark
www.a-pdf.com

Գիրքը յուսապատճենահանվել է
"Համահայկական Էլ. Գրադարան"
կայքի՝ www.freebooks.do.am
կողմից եւ ներկայացվում է իր
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"

Գիրքը կարող է
օգտագործվել միայն ընթերցանության համար...
For more info: www.freebooks.do.am

www.a-pdf.com

ԴՈՒՔ ԿՈՒԶԵՍ ԿԱՐՈՂ ԵՔ ՁԵՐ ԿԵՐԿՈՒՏՈՒՆ ՈՒՆԵԼԻՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՔՆՈՒՆ
ԼՈՒՄԱՑԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԳՐՔԵՐ:

ԹՎԱՅԻՆ ԳՐՔԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍՆԱՎՈՐՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՔ
ԻՄԱՆԱԼ "ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ" ԿՈՄԿՈՆ՝

www.freebooks.do.am

ԵԼՈՒՅԱՊԱՆ ԵՆՔ, ՈՐ ՕԳՆՈՒՄ ԵՔ ՄԵՐ ԿԱՅՔԻՆ
ՑԱՆԿԱՆԱԼՈՒՄ ԵՆՔ ՀԱԶԵԼԻ ԸՆԹԵՐՑԱԼՈՒԹՅԱՆԻՆ:

ԳՐԵՔ ՄԵԶ՝ freebooks@rambler.ru

www.a-pdf.com

ՍԱՅԱԹ ՍՈՎԱ

ԽԱՂԵՐ

www.a-pdf.com

ՔԱՄԱՆՉԱ

Էսպես Արութինի ասած, քրոնիկոնի 447ին:

Ա. (1)

Ամեն տազի մեչը գոված՝ դուն թամամ դասն իս, քամա՛նչա,
Նաքաս մարթ քիզ չի կանա տե սնի, դուն նրա պասն իս, քամա նչա,
Ղաստ* արա՝ է՛լ լավ օրերու էդիվը հասնիս, քամա նչա,
Քեզ ինձնից օ՞վ կանա խլի, աշուղի բասն իս, քամա՛նչա:

Անգաճը էրծաթեն պիտի, գլուխը ջավահիր քարած,
Կութը շիրմայեմեն պիտի, փուրը ասդափով նաղշ արած,
Սիմը օսկեն քաշած պիտի, էրկաթը փանջարա արած,
Օչ օվ ղիմեթը չի գիդի, լալ ու ալմասն իս, քամա նչա:

---

* Բառասկզբում և բառամիջում ղ տառը (նշանով) պետք է արտասանել որպես վրացական ყ, կամ արաբական ق: Ծ. խ.:

Ճիպուտըդ վարաղնած պիտի, թահր ունենա հազար դանգով,
Ձարրդ դաշի կուդեն պիտի. վուր դուն խոսիս քաղցրը հանգով,
Շատին զարթուն կու լուսացնիս, շատին կու քընեցնիս բանգով,
Անուշահամ գինով լիքը՝ դո ւն օսկե թասն իս, քամա՛նչա:

Ածուլիդ էրկու կու շինիս, առաչ շահիր ղափա գուզիս,
Կու մեձրրվիս այվընումը, պարապ վախտի դափա գուզիս,
Յիփ վեր գու քաս մեջլիսումը՝ քաղցրը զող ու սափա գուզիս,
Բոլորքըդ գոզալնիր շարած՝ մեջլիսի կեսն իս, քամա՛նչա:

Շատ տըխուր սիրտ կու խընդացնիս, կու կըտրիս հիվընդի դողը.
Յիփ քաղցրը ձայնըդ վիր կոնիս, բաց կուլի հիդրդ խաղողը,
Խալխին էս իլթիմազն արա՛՝ ասին՝ «ապրի քու ածողը»,
Քանի սաղ է Սայաթ Նովեն, շատ բան կու տեսնիս, քամա՛նչա:

[1759]

www.a-pdf.com

www.a-pdf.com

ԹԵԳՈՒՉ ՔՈՒ ՔԱՇԸ ՄԱՐՔՐԻՏ ՏԱՆ

Գոչ իս, անգին-ից, էն հանգով·

Բ (42)

Թեգուզ քու քաշը մարքրիտ տան
Բրրոյի-բրրոյի,
Թեգուզ քու քաշը ալմաս տան
Բրրոյի-բրրոյի,
Յար, չիմ տա, չիմ հիռացնի քի՛զ
Քու յարեմեն,
Բարեբարեմեն:

Չիմ քաշվի էկած մա՛հեմեն,
Ռաղիփի տըված ա՛հեմեն,
Բրրոյի-բրրոյի,
Թեգուզ ռաղամ գա շա՛հեմեն,
Յար, չիմ տա, չիմ հիռացնի քի՛զ
Քու յարեմեն,
Բարեբարեմեն:

Թեգուզ քու քաշը ալմաս տան
Բըրոյի-բըրոյի,
Թեգուզ քու քաշը մարքրիտ տան
Բըրոյի-բըրոյի,
Յա՛ր, չիմ տա, չիմ հիուացնի քի՛զ
Քու լարեմեն,
Բարեբարեմեն:

www.a-pdf.com

www.a-pdf.com

ԱՐԻ, ԻՆՁ ԱՆԳԱՃ ԿԱԼ

Արութինի ասած, ուշլամա, մայիսի 1, քրոնիկոնի. 441ին:

Գ (16)

Արի՛, ինձ անգաճ կա՛լ, ա՛ւ դիվանա սիրտ,
Հայա սի՛րե, ադաբ սի՛րե, ար սի՛րե.
Աշխարքըս քունն ըլի, ի՛նչ պիտիս տանի,
Աստվաձ սի՛րե, հոքի սի՛րս, յար սի՛րե:

Էն բանն արա, վուր աստըձու շարքումն է,
Խըրատնիրը գըրած՝ Հուրանց վարքումն է.
Յիրիք բան կա՝ հոքու մարմնու կարքումն է՝
Գիր սի՛րե, ղալամ սի՛րե, դավթար սի՛րե:

Յի՛կ, արի, սի՛րտ, մի՛ կենա մե դամաղի,
Հալալ ընտիկ արա հացի ու աղի.
Հենց բան արա՝ մարթ վըրեդ չը ծիծաղի
Խըրատ սի՛րե, սաբըր սի՛րե, շար սի՛րե:

www.a-pdf.com

Հընպարտութին չանիս՝ դուր գու քաս տերին,
Խոնարութին ա՛րա կանց քիզ դեվերին,
Աստված դիփունանցը մին հոքի էրիտ.
Ախկատ սի՛րե, ղոնաղ սի՛րե, տար սի՛րե:

Սայաթ Նովա, էրնեկ քիզ, թե է՛ս անիս՝
Հոքուդ խաթրի մարմնուդ ումբրը կես անիս,
Թե գուզիս, վուր դադաստան չը տեսանիս՝
Վանք սի՛րե, անապատ սի՛րե, քար սի՛րե:

[1753]

www.a-pdf.com

ՎՈՒՆՑ ՕՐ ՎՈՒՐ ՂԱՐԻԲ ԲՈՒԼԲՈՒԼԸ

Էսպես **Դիբա ու յինգիդունիայի** հանգում, որ մուսադասի կասին. Արութինի ասած, քրոնիկոնի 446ին:

Գ (30)

Վունց օր վուր ղարիբ բուլբուլը մե տարով բաղին կարոտ է,
Էնենց գու լա քու սիրողը ձեռիդ յարաղին կարոտ է.
Դուն ուրիշի հիդ մի՛ խոսի, քու ճուրտը աղին կարոտ է.
Հասիլ է ծուցիդ շամամը՝ օսկե թաբախին կարոտ է:

Մե զադ չը կա՝ գուման ածիմ, ասիմ, էն նըման է գունքըդ,
Անղալամ անզարնիշ քաշած օսկու պես է փայլում ունքըդ,
Բոյեմեդ չուրս մատն ավելի լըցվիլ է դոշդ ու թիկունքըդ,
Զարով, աբրեշումով հուսած մազիրըդ շաղին կարոտ է:

Դուն խոմ է ն գլխեն գոված իս, յիս քիզ նուրմեկ գովիմ, ա՛յրի.
Ծուցըդ վարաղնած հուջրա է, հուտ ունե մուշկ ու ամբարի,
Յիրիք հարուր վացունուվից ամեն անդամըդ ղարարի,
Կուռրդ չիշմատ. մատնիրըդ մում՝ բըրոլե ճաղին կարոտ է:

www.a-pdf.com

Ցիս է՛լ ուրիշի յար չիմ սիրի, աշխարումը դուն իս իմը,
Թե մե շափաթ քիզ չիմ տեսնի, կու կըտրիմ քամանչի սիմը,
Թեգուզ թաքավորը կանչե, թեգուզ Լողըման հեքիմը,
Վո՞ւր մե դարդըս կու հասկանան՝ դուգունըս դաղին կարոտ է։

Գիշիր-ցերեկ մանն իմ գալի էշխեդ լանա-յանա, գո՛զալ,
Անգաճ ա՛ռա, մատաղ իմ քիզ, սե քիչ կամաց գընա, գո՛զալ.
Աշխարրս ո՞ւմն է մընացի, վուր ինձ ու քիզ սընա, գոզալ.
Մաղաս սեռա վ Սայաթ Նովեն, անգաճըդ խաղին կարոտ է։

[1758]

www.a-pdf.com

ՄԵ ԽՈՍԿ ՈՒՆԻՄ ԻԼԹԻՄԱԶՈՎ

Էս էլ ևս **[Դիբա ու յինգիդունիայի]** հանգում, Արութինի [ասած], քրոնիկոնի 446ին:

Ե (31)

Մե խոսկ ունիմ իլթիմազով, անգաճ ա՛բա, օ՞վ աճկի՛լուս,
Սըրտումըս ինթիզար ունիմ, քու տիսը բարով, աճկի՛լուս,
Աջաբ քիզ ի՞նչ գեթ իմ արի՝ կենում իս խըռով. աճկի՛լուս,
Աշխարս աշխարով կըշտացավ, յիս քիզանից սով, աճկի՛լուս:

Մուգամ օչ օվ յար չէ՞ սիրի, էս ի՞նչ արիր, էս ի՞նչ բան ա.
Էշխեմեդ ջունուն իմ էլի, ման իմ գալի յանա-յանա,
Էս դարդեն օչ օվ չը քաշե, վուր մե դանգին չի դիմանա,
Սիրտըս լուրի պես խորվեցիր էշխիդ կըրակով, աճկի՛լուս:

Դոստիրըս դուշման շինեցիր, յադերուն ինչպե՞ս դոստ անիմ,
Անցկացած օրը չիմ տեսնում, քանի գուզե վուր ղաստ անիմ,
Աստված վըկա, խիստ դըժար է, գըլուխըս ինչպե՞ս դուս տանիմ,
Յիս մե փուքըր նավի նըման, քու էշխըն է ծով, աճկի՛լուս:

www.a-pdf.com

Գուզիմ բերանը բաց անիմ, գովքդ ասիմ թարիփի պես.
Տաս տարի է ման իմ գալիս փադիշահի շարիփի պես,
Օխտը տարի էլ ման գու քամ սազը ձեռիս Ղարիբի պես.
Բութա Ծահսանամը դուն իս, էլ չունիմ օշ օվ, աճկի լուս:

Թեգուզ հազար դարդ ունենամ, յիս սըրտումը ա՜հ չիմ ասի.
Իմ հուքմի-հեքիմը դուն իս, յիս էլ ուրիշ շահ չիմ ասի.
Սայաթ Նովեն ասաց. զա՛լում, յիս էն մահին մահ չիմ ասի՝
Հենչաք ըլի՝ դուն վըրես լաս մազըդ շաղ տալով, աճկի լուս:

[1758]

www.a-pdf.com

ՄԵՋԼՈՒՄԻ ՊԵՍ ԿՈՐԱՎ ՅԱՐԸՍ

Էս էրկու խաղը* էն ձեռով՝ **Բլբուլը նստած է վարթին, լավ կանչեր նա վարթի համա.** Արութինի ասած, ապրիլի 5, քրոնիկոնի 445ին:

Զ (27)

Մեջլումի պես՝ կորավ յարըս,
Լեյլի ջա՜ն, ման իմ գալի
Յանա-յանա:
Էրվեցավ խունի ջիգարըս,
Արնի պես աճկս է լալի
Յանա-յանա,
Յանա-յանա:

Բլբուլի նըման լացիլ իմ,
Աճկիրըս արնով թացիլ իմ,
Յանա-յանա,
Էշխեմեդ հիվանդացիլ իմ,
Պառկած իմ դըժար հալի,

* Տե՛ս ԼԶ (28) խաղը:— **Ծ. խ.:**

www.a-pdf.com

Յանա-յանա,
Յանա-յանա:

Էշխեմեդ դառիլ իմ յիզ՛ոդ,
Հուլվեցա, մաշվեցա քիզիդ,
Յանա-յանա,
Ռահիմ ա բա, մե խո՛սի միզիդ,
Բե՛մուրվաթ, ձեն իմ տալի
Յանա-յանա,
Յանա-յանա:

Էրվում իմ, կանչում իմ ամա՜ն.
Ծուցը դաղ, ունքիրը դաման.
Յանա-յանա,
Աշխարիս մեչը քիզ նըման
Չիմ տեսած, ման իմ գալի
Յանա-յանա,
Յանա-յանա:

Մանուշակ բաց արած հովին,
Կարմի՛ր վարթ, ծաղիկ հուտովին,
Յանա-յանա,
Ծատ մի՛ լացնի Սայաթ Նովին,
Անկի՛լուս, կըսկրծալի,
Յանա-յանա,
Յանա-յանա:

[1757]

www.a-pdf.com

ԱՌԱՆՑ ՔԻԶ Ի՞ՆՉ ԿՈՆԻՄ

Արութինի [ասած], լավ ֆափիա-յարանա։

Է (21)

Առանց քիզ ի՞նչ կոնիմ սոյբաթն ու սազը,
Զեռնեմես վեր կոծիմ չանգիրը մե-մեկ,
Զունքի ուշկ ու միտկըս իրար շաղեցիր,
Փահմես կու հիոացնիմ հանգիրը մե-մեկ։

Մե դուգունը էրկու դաղին ի՞նչ անե,
Մե նոքարը էրկու աղին ի՞նչ անե,
Մե բաղմանչին էրկու բաղին ի՛նչ անե,
Փեյվանդ գուզե թազա տընգիրը մե-մեկ։

Ղուրթ ին ասի փիր ուսուսաքար դաղիրը.
«Բաղ շինեցի, վարթը քաղից վաղիրը».
Ջաղեն յիս քաշեցի, սաղեն՝ յաղիրը.
Ռաֆիփ էկավ միզ, էս բանգիրը մե-մեկ։

www.a-pdf.com

Առանց քիզ ի՞նչ կոնիմ աշխարհս մալը.
Չիմ անի քալագը, չիմ անի ղալը,
Կու հաքնիմ մազեղեն, կու հաքնիմ շալը,
Կէրթամ ու ման գու քամ վանքիրը մե-մեկ։

Բըլքամ մե մարթ ռաստ գա, վուր ինձ խըրատե,
Գո՛զալ, քու էշխեմեն սիրտըս ազատե.
Կանց յոթըն իմաստնասիրացը շատ է՝
Էս քու Սայաթ Նովու բանքիրը մե-մեկ։

www.a-pdf.com

ԴՈՒՆ ԷՆ ԳԼԽԵՆ ԻՄԱՍՏՈՒՆ ԻՍ

Էսպես Արութինի [ասած], քրոնիկոնի 441ին:

Ը (10)

Դուն է՛ն գըլխեն իմաստուն իս, խիլքդ հիմարին բաբ մի՛ անի,
Էրազումը տեսածի հիդ միզի մե հեռաբ մի՛ անի,
Յիս խում էն գըլխեն էրած իմ, նուրմեկանց քաբաբ մի՛ անի,
Թե վուր, գիդիմ, բեզարիլ իս, ուրիշին սաբաբ մի՛ անի:

Զը կա քիզ պես հուքմի-հեքիմ, դուն Ռոստոմի Զալ, թաքա՛վուր,
Ասկըդ ասկերումը գոված՝ համ դո՛ւն իս գոզալ, թաքա վուր,
Թե էսանց էլ սուչ ունենամ՝ գլուխս արա՛ տալ, թաքա՛վուր,
Մըտիկ արա քու ստիղծողին՝ նահնախ տիղ ղազաբ մի անի:

Յարալուն հեքիմ էնդուր գուզե՝ դիղ տալու է, ցավ տալու չէ,
Քանի գուզե արբաբ ըլի՝ ղուլը աղին դավ տալու չէ,
Դուն քու սիրտը իստակ պահե, յադի խոսկը ավտալու չէ,
Ասծու սերը կանչողի պես դըռնեմեդ ջուղաբ մի՛ անի:

www.a-pdf.com

Ամեն մարթ չի՛ կանա խըմի՝ իմ ջուրը ուրիշ ջըրեն է,
Ամեն մարթ չի՛ կանա կարթա՝ իմ գիրը ուրիշ գըրեն է.
Բունիաթս ավազ չիմանաս՝ քարափ է, քարուկըրեն է,
Սելավի պես՝ առանց ցամքիլ, դուն շուտով խարաբ մի՛ անի։

Քանի գուզե քամին տանե՝ ծովեմեն ավազ չի՛ պակսի.
Թեգուզ ըլիս, թեգուզ չըլիս՝ մեջլիսներուն սուզ չի՛ պակսի,
Թե կու պակսիմ, քիզ կու պակսիմ՝ աշխարիս մե մազ չի՛ պակսի,.
Սայաթ Նովու գերեզմանը Հինդ, Հաբաշ, Արաբ մի՛ անի։

[1753]

www.a-pdf.com

ՅԻՍ ՄԵ ՀԱՐԻԲ ԲՈՒԼԲՈՒԼԻ ՊԵՍ

՝Էս Արութինի ասած է. Հազալի: Էս էրկու խաղը* մի հանգով է, ով որ սովորի **Դոստիի** խաղի ձենով ասի, թե որ չիմանաս հարցրու թե՝ **Գոզալար յիՀնաղինա բախ, դաստա-բեդաստա թարփանուր:**

Թ (8)

Յիս մե հարիբ բուլբուլի պես, դուն օսկե հափազի նըման.
Էրեսըս դի վուտիդ տակը՝ ա՛նց կաց, փիանդազի նըման.
Յա՛ր, քեզիդ խոսիլ իմ ուզում՝ շահի իլթիմազի նըման.
Աչայիբ սուրաթի տեր իս՝ ուանգըդ է գուլգազի նըման:

Յա՛ր, մըտիլ իս բաղչի մեչը, աչայիբ սեյրան իս անում,
Ծուխկդ արեգազի նըման է՝ տեսնողին հեյրան իս անում.
Ջիգարըս կըրակ իս տըվի, էրվում իմ՝ բիրյան իս անում.
Վո՛ւնց մե գոզալ չէ ունեցի՝ էտ քու արած նազի նըմանն:

Հենց իմացի, յա ր, քու հուլն իմ, թանգ հախով գընած չըրաղ իմ,
Յա՛ր, դրոանդդ նընգած ըլիմ, օ՛վ տեսնե, ասե՝ տուսաղ իմ. .

---

* Տե՛ս Լ (7) խաղը: **Ծ. խ.:**

www.a-pdf.com

Էշխեմեդ հիվանդացիլ իմ, վո՛ւնց մեռնում իմ, վո՛ւնց թե սաղ իմ.
Ծովի պես ուրղան իմ տալի, գըժվիլ իմ Արազի նըման:

Օվ կու տեսնե, ջունուն կու լի, բարգ էրեսիդ խալ իս անում.
Էլ ջուքամը դո՛ւն կու քաշիս, չուն մահիս խիալ իս անում.
Յա ր, յիս քիզ բարով իմ տալի, շուռ իս գալի, ղալ իս անում,
Զունքի խոսկըդ անց է կենում բելլու՝ շահ-անդազի նըման:

Սայաթ Նովեն ասաց՝ գու լամ, չիմ լաց լի՝ թե ճար ունենամ.
Էլ յիս կու քաշիմ էս ղուսեն՝ թո՛ւղ լի ահ ու զար ունենամ.
Յա՛ր, քիզ վըրեն արք ունենամ, մե լավ իխտիար ունենամ՝
Առնում, տանիմ մեջլիսները օսկեջըրած սազի նըման:

www.a-pdf.com

ՈՒՍՏԻ՛ ԳՈՒ ՔԱԱՆ, ՂԱՐԻԲ ԲԸԼԲՈՒԼ

Արութինի ասած, թասլիք։

Ժ (9)

Ուստի՞ գու քաս, ղարիբ բըլբուլ,
Դու մի լաց լի, յի՛ս իմ լալու.
Դու վարթ պըտռե, յի՛ս գոզալին,
Դու մի՛ լաց լի, յի՛ս եմ լալու։

Ա՛րի, բըլբուլ, խո՛սի բարը,
Օխանըվի քու էկած սարը.
Քի վարթն էրից, ինձ իմ յարը,
Դու մի՛ լաց լի, յի՛ս իմ լալու։

Ման իմ գալի դիդարի հիդ,
Վունց ղարիբ բըլբուլ խարի հիդ.
Դու վարթի հիդ, յիս յարի հիդ,
Դու մի՛ լաց լի, յի՛ս իմ լալու։

www.a-pdf.com

Սալըբու նըման կանաչ իմ,
Ցի՛կ, խո՛սի՝ ձայնիդ ճանանչ իմ.
Դու վա՞ղթ կանչե, յիս յա՞ր կանչիմ,
Դու մի՛ լաց լի, յի՛ս իմ լալու։

Ղարիբ բըլբուլ՝ ձայնըդ մալում,
Ցիս ու դուն էրվինք մե հալում.
Սայաթ Նովեն ասաց՝ զա՛լում,
Դո՛ւ մի՛ լաց լի, յի՛ս իմ լալու։

www.a-pdf.com

ԽՈՍԿԻՐԸԴ ՄԱԼՈՒՄ ԻՄ ԱՐԻ

Էսպես մուխամմազ-բայաթի, Արութինի ասած·

ԺԱ (13)

Խոսկիրըդ մալում իմ սրի՝ անարատ մաքուր իս, ա՛խպեր.
Օսկե փարչումը լըցըցած անմահական ջուր իս, ա խպեր,
Խըմողը վո՞ւնց կու կըշտանա՝ դուն կաթնե ախպուր իս, ա խպեր.
Աշխարքը ծով՝ դուն մեչը նավ, սան գու քաս փըրփուր իս, ա խպեր
Չվախում իմ, թե ինձ էլ էրիս՝ անհանգչելի հուր իս, ա՛խպեր.

Հուր իս՝ էշխով կըրակած,
Խոսկ իմ ասում առակած,
Իմ սիրմա-էրծաթ ախպեր՝
Օսկեջըրով վարակած։

Աջաբ միգիդ ի՞նչ իս կամում, ի՞նչ է ասում էտ քու փալըդ.
Իսկի չի՛ս գալի, չի՛ս ասում՝ աջաբ ի՞նչ է, բա՛նդա, հալըդ.
Աստված վըկա, սիրտըս էրից ջեյրանի նըման սան գալըդ.
Յիս քիզանից չի՛մ հիոանա, թեգուզ դուս գա խաթ ու խալըդ.
Թեգուզ սիրիս, թեգուզ ատիս, թե գուզե հանփուրիս, ա խպեր։

www.a-pdf.com

Հանփուրիմ սիրով հանփուր,
Վունց օր խեչին է դաստուր.
Օվ քիզ խայան մըտիկ տա՝
Դառնա էրկու աճկով կուր:

Քիզիդ բաս օ՞վ կարա բըռնի՝ հազար բաբաթ բառ իս էլի.
Խոսկիրըդ անգին ջավահիր՝ Ասմավուրու ճառ իս էլի.
Հուտըդ աշխարըս է զավթի՝ բալասանի ծառ իս էլի.
Չը կա քիզ պես էշխի ջունուն՝ կըրակ ընգած վառ իս էլի.
Շատ մարթի քիզիդ կու էրիս, էտ լիզվի տեր վուր իս, ա խպեր:

Վուր յիս ասիմ իմացի,
Էշխի մեչը հիմնացի.
Ինձ հուրյան բիրյան արիր,
Ասում իս թե՝ դիմացի:

Խիլքըս գըլխեմես տարիլ իս, լիրթ ու թուքըս զարդ իս արի,
Սիրտըս փուրումըս սպանեցիր, էշխեդ քիզի նարդ իս արի,
Ինձ հուրյան բիրյան շինեցիր, աջա՞ք դուն էլ դարդ իս արի,
Յիփ քի սիրով մեյման անիմ, վի կա՛ցի, թե սարդ իս, ա՛րի.
Ուրախա ցի, ուրախա ցու, չունքի միզ մոդ հուր իս, ա՛խպեր:

Հո՛ւր իս, սիրով, սիրական,
Քիզի ղուլլուղ պատվական,
Հազար թուրլու կերակուր,
Սուրփ գինի անապական:

Համաշա իմ յարի ճանփին կանգնած իմ՝ տալիս իմ դովա.
Աշխարքն աշխարով կըշտացավ, իմ սիրտը քիզանից սով ա.
Սը՛րե, շա՛ղ տու վուտիդ տակը, էշխեդ դառա հավաջովա.
Իսկի չիս գալի, չիս ասում՝ խի՛ստ իս լալիս, Սայաթ Նովա,
Չըլի՞ միտկըդ մոլրըվիլ է, սրտումըդ պըխտուր իս, ա՛խպեր.

Պըխտուր սիրտըդ պարզ արա,
Բլբուլի պես փարա՝ սրա,
Աստրանն փառք [illegible] ինձ՝
Դարդըդ խանին [illegible] արա:

www.a-pdf.com

ՇԱՏ ՄԱՐԹ ԿՈՍԵ

Էսպես վարսաղ, Արութինի ասած, մե սիրունի վրա։

ԺԲ (20)

Շատ մարթ կոսե՝ յիս յարեմեն հասրաթ իմ՝
Լեյլի-Մեջլումն էլ չէ էլի է՛ս հալով.
Մարթ պիտի համաշա բերանը դ տընդրե՝
Խոսկ իս ասում առակավուր-մասալով։

Լիզուդ քաղցը ունիս՝ շաքար ու շարթին.
Մազիրը դ ռեհան է՝ փաթըթած վարթին.
Քի զարթարած տեսնիմ յիդ ծաղկազարթին՝
Հաքիլ ըլիս զար զարբաբը՝ խաս ալով։

Ցա՛ ինձի կորցըրեք, յա՛ մե բան արեք,
Խփե՛ցեք մե տիղրս, մե նշան արեք,
Թեգուզ էստու համա քարասպան արեք՝
Չի՛մ կըշտանում գոգալի հիդ խոսալով։

www.a-pdf.com

Աջաբ վո՞ւնց դիմանամ լիս էս չափ դարին,
Աճկեմես արտասունք՝ դուս գու քա արին,
Օրըն իր շաբաթով կարոտ իմ լարին,
Վունց օր ղարիբ բըլբուլ՝ վարթին տիսալով։

Խիլքըս տարավ՝ ջադուքարին չի՛մ տեսի.
Բեմուրվաթին, բեիղրարին, չի՛մ տեսի.
Սալաթ Նովեն ասաց՝ լարին չի՛մ տեսի.
Ման իմ գալի արտասունքըս հուսալով։

www.a-pdf.com

ԻՆՁ ՈՒ ԻՄ ՍԻՐԵԿԱՆ ՅԱՐԻՆ

Էս էլ **Դիբա ու յինգիդունիայի** ձենում, հանգը ղազալի.
Արութինի ասած, քրոնիկոնի 447ին:

ԺԳ (57)

Ինձ ու իմ սիրեկան յարին մի տարի բերած գիդենաք.
Ա խ քաշելեն սըրտիս մեչը արունը մերած գիդենաք.
Գիշիր-ցերեկ յարի խաթրու ջիգարըս էրած գիդենաք.
Անկըս թաց, բերանըս ցամաք, լիզուս յիդ քերած գիդենաք:

Սիրտըս փուրումըս թուլացավ անգալներու զախ անելեն,
Ուշկ ու միտկըս խառնըվեցավ խուռը-խուռը խաղ հանելեն,
Անկեմես ջուհարը գընաց՝ յարեն կարոտ՝ ա խ անելեն.
Է՛լ ապրելու ումիկ չունիս, իմ օրըս կերած գիդենաք:

Էրած խորված ման իմ գալի, մե տիղ չը կա մար ունենամ.
Լիզվով չիմ կանացի ասի, թեգուզ խոսկըս փար ունենամ.
Ափսուսալու հազար ափսուս, յիս Է՞ւ ղադա դար ունենամ.
Էշխեն ուշկ ու միտկըս կապած, ինձ ջըրի տարած գիդենաք:

www.a-pdf.com

Սիրտըս փուրումըս ռըքուր է, ալ ամկիրըս լաց է անում.
Ծովը ընգած ամբի ընման դոշս ու յախես թաց է անում.
Քանի վուր մըհլամ իմ դընում, դուգունս է՛լ խիստ բաց է անում.
Հալվեցա, արնաքամ էլա՝ յարես յիդ արած գիդենաք:

Օվ տեսնում է, է՛ս է ասում՝ «վա՜յ քու դարին, Սա՛յաթ Նովա,
Համաշա քիզ պիտինք տեսնի ամկըդ արին, Սա՛յաթ Նովա,
Ինչո՞վ չէլավ, չըռաստ էկար մե լավ յարին, Սա՛յաթ Նովա».
Ումբըրս էրազի պես գընաց՝ ծառըս չը խերած գիդենաք:

[1759]

www.a-pdf.com

ԷՆԴՈՒՐ ԱՃԿԸՍ ՉԷ ՑԱՄԱՔՈՒՄ

Էս էլ **Դիբա ու յինգիդունիայի** ձեռում. Արութինի ասած,
հունիս, քրոնիկոնի 446ին:

ԺԴ (33)

Էնդուր աճկըս չէ ցամաքում՝ սըրտիս մեչը արին մընաց.
Վունչիչ դարով չը լավացավ՝ մըհլամըս յիդ յարին մընաց
Էշխեմեն հիվանդ պառկեցա, աճկըս ճանապարհին մընաց.
Յիփ մեռա՝ իժում տիս էկավ՝ նազը բեիղրարին մընաց:

Գարունքվան վախտը լըցվիլ է, էրա՛նի ձիզ, ծաղկած վարիր,
Թե բըլբուլին բաղ ղըրգեցիք, մանիշակով լիքը սարիր,
Բաս ինչի՞ ձենը չէ գալիս, սալբ ու չինար, էտ ի՞նչ արիր,
Ճուխկըդ բըլբուլին սըպանից, կարմիր վարթը խարին մընաց:

Ալ պուճպուճեն ասաց խափե սարումը ղարիբ բըլբուլին,
Յիփ բըլբուլը միտրն ածավ ռեհրանով կապած թայգուլին.
Օվ վաղ գընաց՝ վարթը քաղից, չասին՝ թե պետկ է բըլբուլին,
Վա՛յ քու դարին, ղարիբ բըլբուլ, վուր լեշըդ չափարին մընաց:

www.a-pdf.com

Խոսկիրրդ քաղցրր քաղցրր է, լիզուդ շաքար ու նաբաթ է.
Խրմողին վրնաս չի անի՝ ձեռիդ բրոնածը շարբաթ է.
Ճափաթրն-օխտն օրը՝ ասի քու հաքածն ուրի՞շ բաբաթ է.
Հաքիլ իս բեհեզ ծիրանին՝ ծալած ղալամքարին մրնաց։

Աշուղի լիզուն բրլբուլ է, օրհնանք ունե, նալլաթ չը կա.
Ծահի մոդ խոսկն անց կու կենա, սրպանելու ջալլաթ չը կա.
Հեքիմ ու դադաստան չը կա, մե դրրուստ ադալաթ չը կա.
Մե մարթ չը կէր՝ ազատիլ էր, Սայաթ Նովեն դարին մրնաց։

[1758]

www.a-pdf.com

ՉԻՆ ԱՍՈՒՄ, ԹԵ ԼԱՑ ԻՍ ԷԼԻ

Էապես թապիբ.

ԺԵ (41)

Չի՛ս ասում, թե լաց իս էլի,
Բարով տեսա, իմ սիրեկան,
Վարթի նման բաց իս էլի
Խարերով,
Խարերով.
Բարով տեսա, իմ սիրեկան:

Ա՛րի, մե դարդըս իմացի,
Էշխեմեդ համա՞ն իմ լացի.
Օրըս էապես անց է կացի
Դարերով,
Դարերով.
Բարով տեսա, իմ սիրեկան:

Յիփ կու հաքնիս ալ ու ատլաս,
Տեսնողին կու շինիս մաս-մաս.

www.a-pdf.com

Դոշիդ պիտի լալ ու ալմաստ
Շարերով,
Շարերով.
Բարով տեսա, իմ սիրեկան:

Յիս քիզ գովիմ խաղի մեչը,
Շամամնիրը դաղի մեչը.
Ման իս գալի բաղի մեչը
Յարերով,
Յարերով.
Բարով տեսա, իմ սիրեկան:

Սայաթ Նովեն վո՛ւնց դընջանա,
Անկիրտդ օսկե փընջան ա.
Դուշմանի լիզուն մընջանա
Ձարերով,
Ձարերով.
Բարով տեսա, իմ սիրեկան:

www.a-pdf.com

ՁԵՆԸԴ ՔԱՂՑԸՐ ՈՒՆԻՍ

Հափիա, էապես լավ յարի վրա, Արութիւնի ասած։

ԺԶ (19)

Ձենըդ քաղցըր ունիս՝ լամզով կու խոսիս,
Նա պահե քիզ, ումն օր ծառա իս, գո՛զալ,
Մեճկըդ ջեյրանի է, ռանգըդ՝ շաքարի,
Փռանգըստանու էկած խարա իս, գո՛զալ։

Հումաշ ասիմ՝ շուրեղեն է, կու մաշվի,
Սալբի ասիմ՝ ախըր սին օր կու տաշվի,
Ջեյրան ասիմ՝ շատ մարթ քիզիդ կու յաշվի,
Բաս վո՞ւնց թարիփ անիմ՝ մարա իս, գո՛զալ։

Թե մանիշակ ասիմ՝ սարեմեն կոսին,
Թե ջավահիր ասիմ՝ քարեմեն կոսին,
Թե վուր լուսին ասիմ՝ տարրեմեն կոսին,
Արեգագի նըման փարա իս, գո՛զալ։

www.a-pdf.com

Գուզիմ թե համաշա դրդանքդ գամ ուխտ,
Աճկիրքդ, կարմի՛ր վարթ, նուր բացարած տուխտ,
Լիզուդ՝ գրրիչ ունիս, ձեռքդ՝ գուլգազ թուխտ.
Ծովեմեն դուս էկած զարա իս, գո՛զալ:

Սիրա սիրմքդ սրրտիս մնչը ցանեցիր,
Նազ ու ղամզով, յա՛ր, իմ հոքիս հանեցիր,
Է՛ս քու Սայաթ Նովուն դուն սրպանեցիր
Գրլխիդ էկած ղադեն առա յիս, գո՛զալ:

www.a-pdf.com

ԷՍՕՐ ԻՄ ՅԱՐԻՆ ՏԵՍԱ

Էսպես լավ մուխամմազ, Աքութինի ասած:

ԺԷ (14)

Էսօր իմ յարին տեսա բաղչի մեջը ման գալով,
Գեդինը զարթարվեցավ իմ յարի օսկե նալով.
Բլբուլի պես պտուտ էկա վարթի վրա, ձեն տալով.
Զունուն էլավ խիլքըս գըլխես, սիրտս տխուր, աճկս լալով.
Հուս ունիմ իմ ստեղծողեմեն՝ մեր դուշմանն ըլի էս հալով:

Յա՛ր, էտ քու նազ ու ղամզով ջանս փել ու փանդ իս արի,
Խմիլ ես էշխով շարբաթը, պոռշնիրըդ ղանդ իս արի.
Խաթ ու խալով, քաղցր լիզվով շատ ինձ պեսին բանդ իս արի.
Տո՛ւր դանակը, ինձի սպանե, մի՛ ասի՝ ըիշխանդ իս արի.
Զունքի մահս յարեմեն է, թո՛ւղ լի մեռնիմ լավ գոզալով:

Տարին-տասներկու ամիս մազիրըդ հուսած կուլի.
Պոռշեմեդ միդր է կաթում, թողնիս՝ յախեդ թաց կուլի,
Գարնան շընչի նըման՝ կարմիր վարթի հիդ բաց կուլի.

www.a-pdf.com

Ի՞նչ օքուդ է քու բաղմնչուն՝ դարիք բլբուլը լաց կուլի.
Մուրվաթ չունի՞ս, պտուտ գու քա բաղչի վրա ճըկճըկալով։

Յիփ քու սուրաթը կու քաշին՝ նաղշումը շընուք կու տաս.
Կու վառվռաս ճրաքի պես՝ սաղչումը շընուք կու տաս.
Մըշկով լիքը բըրոլի պես՝ թաղչումը շընուք կու տաս.
Բաց կուլիս կարմիր վարթի պես՝ բաղչումը շընուք կու տաս,
Քամին դիբչի փոթլիդ մեչը՝ հուտըդ գու քա վըռվռալով։

Յիս է՛լ ուրիշ յար չունիմ, է՛ս գլխեն վաղ իմացի,
Անգաճ ա՛րա, մա՛տաղ իմ քիզ, է՛ս խոսկս սաղ իմացի.
Մտիկ ա՛րա քու ստիղծողին, տուզ-նամագ-աղ իմացի.
Սայաթ Նովին մի՛ ջգրեցնի՝ էշխեմեդ տուսաղ իմացի.
Խիլքս գլխեմես տարիլ իս քու, բեմո՛ւրվաթ, գարդիշ տալով։

www.a-pdf.com

ԱՇԽԱՐՈՒՄՍ ԱԽ ՉԻՄ ՔԱՇԻ

Էսպես Արութինի ասած, ով որ սովորի, թողություն շնորհեմ: Էսպես ղուզալի, **Դաստա բեդաստա թարիփանուրի** ձենում, Արութինի ասած: Սրա հատը դիմացն է*:

ԺԸ (24)

Աշխարումըս ա՛խ չիմ քաշի, քանի վուր ջա՛ն իս ինձ ամա.
Անմահական ջրրով լիքը օսկե փընջան իս ինձ ամա.
Նըստիմ, վըրես շըվաք անիս՝ զարբաբ վըրան իս ինձ ամա.
Սուչս իմա՛ցի, էնենց սըպանե, սուլթան ու խան իս ինձ ամա:

Մեճկըդ սալբ ու չինարի պես, ռանգըդ փըռանգի ատլաս է,
Լիզուդ շաքար, պռոշըդ ղանդ, ակռեքըդ մարքրիտ ալմաս է.
Օսկու մեչը մինա արած, աճկիրըդ ակնակապ թաս է.
Պատվական անգին ջավահիր, լալ-բադեշխան իս ինձ ամա:

Յիս էս դարդին վո՞ւնց դիմանամ՝ մագա՞մ սիրտըս ունիմ քարած,
Արտասունքս արուն շինեցիր, խիլքըս գըլխես ունիմ տարած,
Նուր բաղ իս, նուր բաղչի մեչը, բոլորքըդ վարթով չափարած,
Վըրեդ շուռ գամ բըլբուլի պես՝ սիրով սեյրան իս ինձ ամա:

---

* Տես՝ խաղ ԺԹ (23): **Ծ. խ.:**

www.a-pdf.com

Քու էշխըն ինձի մաստ արավ. յիս զարթուն իմ, սիրտըս է քընած.
Աշխարըս աշխարով կըշտացավ, իմ սիրտըս քիզնից սով մընաց.
Յա՛ր, քիզ ինչո՞վ թարիփ անիմ՝ աշխարումըս բան չը մընաց.
Կրա՛կե, ծովեմեն դուս էկած, ռաշ ու ջեյրան իս ինձ ամա.

Ի՞նչ կուլի մեկ հիդըս խոսիս, թե վուր Սայաթ Նովու յար իս.
Ծուխկըդ աշխարըս բըռնիլ է՝ արեգագի դեմը փար իս.
Հուտով հիլ, միխակ, դարչին, վարթ, մանիշակ, սուսանբար իս,
Կարմըրագուն՝ դաշտի ծաղիկ, հովտաց շուշան իս ինձ ամա։

www.a-pdf.com

ԻՆՁ ՍԻՐԵՑԻՐ, ԷՇԽԸ ՆԸՆԳԱՐ

Ղազալի. Էպես Արութինն ու իր սիրեկանը որ խոսել են՝ էն է, սիրեկանը էս ասել է ուղղակի Սայաթ Նովայի էրեսին, քրոնիկոնի 442ին։ Էպես ասել է մեկ հավատարիմ յարը և մյուս էրեսին Սայաթ Նովեն, ապրիլի 1, քրոնիկոնի 442ին։

ԺԹ (23)

Ինձ սիրեցիր, էշխը՝ նընգար, խաղի դավթար իմ քիզ ամա.
Սի՛ քաղի փըշի ծաղիկը՝ վարթ, սուսանբար իմ քիզ ամա.
Չիմ թողնի արեգագումը՝ բաղչի սաջար իմ քեզ ամա.
Յիս քու մահը վո՞ւնց կու խընդրիմ՝ նուիր ու շաքար իմ քիզ ամա.

Էլ քու բաղին մընտիկ արա, ուրիշ բաղեն վարթ չին ուա քիզ.
Աղ ու հացը մի՛ դեն գընցի, շափթենը մեկ մընտիկ տու միզ,
Թեգուզ աշխարհըս պընտուտ գաս՝ չիս տեսնի ինձի պես ա՛զիզ.
Թսաք ուրիշ գոգալ չը սիրիս՝ իղրարով յար իմ քիզ ամա։

Թաք յիս մորես չէի ծընի, վա՛յ էն օրին՝ յիս քիզ տեհա.
Դուն բլբուլ իս, յիս կարմիր վարթ, չասիս, թե՝ վարթը ջալդ կեհա.

www.a-pdf.com

Մե՞ փուքրը էտենց դիմացի, շուտով Հընդասաան մի՛ էհա.
Անգործիլ, անխարջ ու քըրիհ՝ մանդիլի զար իմ քիզ ամա։

Աստված վըկա, ղիմիշ արած գըլուխըս քիզ մատաղ ըլի.
Յի կ քիզիդ սիրով դամ անիմ, օվ գուզե բեդամաղ ըլի.
Յիս քու խոսկեն չիմ անց կենա, թաք քու դամաղը չաղ ըլի.
Թեգուզ անմահութիհն ուզիս, սիրով կու ճարիմ քիզ ամա։

Քու դարդըն ինձի պառվեցուց. ո՞ւմըն ասիմ, Սա՛յաթ Նովա.
Մի՛ գըցի ձեռնեմեն ձեռը՝ օսկե թաս իմ, Սա՛յաթ Նովա.
Փոանգըստանու միչեն ելած՝ զար ատլաս իմ, Սա՛յաթ Նովա.
Ծալե դավթարըդ, ղութին դի, ռանգ ու ռուքար իմ քիզ ամա։

[1754]

www.a-pdf.com

ԻՆՉ ԿՈՆԻՄ ՀԵՔԻՄԸ

Էսպես Շիրվանի հանգում, որ ասում են **Յոլարումզդան:**
Սեպտեմբերի 3, քրոնիկոնի 444ին:
Էսպես Արութինն ու իր սիրեկանը որ խոսել են, էն է:

Ի (26)

Ի՞նչ կոնիմ հեքիմը, ի՞նչ կոնիմ ջարեն,
Քու տըվածը ուրիշ դիղ է, ուրիշ դիղ:
Էրում է մըհլամը, չէ լավնում յարեն.
Քու տըվածը ուրիշ դիղ է, ուրիշ դիղ:

Ասաց թե՝ հիոա ցի գըլխեմես, գընա.
Քու ասածը ուրիշ տիղ է, ո՛ւրիշ տիղ.
Էտ քու արարմունքսը քիզի չի մընա,
Քու ասածը ուրիշ տիղ է, ո՛ւրիշ տիղ.
ուրիշ տիղ, ամա՜ն, ո՛ւրիշ տիղ:

Ասի թե՝ էշխեմեդ չիմ հանքչում տանըս,
Ջեռնիրըս թըլացավ՝ չէ շինում բանըս,
Էրվեցավ ջիգարըս, մաշվեցավ ջանըս,
Քու տըվածը ուրիշ դիղ է, ո՛ւրիշ դիղ:

www.a-pdf.com

Ասաց՝ իմ դիղեմնեն քիզ չը կու չարա,
Գընա՛, թե խիլք ունիս՝ գլխիդ ճար արա,
Թե չէ՝ անիլ կու տամ քիզ փարա-փարա.
Քու ասածը ուրիշ տիղ է, ո՛ւրիշ տիղ։

Յիս բըլբուլ իմ, վարթըս մընաց խարումը.
Կըրակ դըրիր սըրտիս խուցի յարումը.
Վո՛ւնց գըրանքումը կա, վո՛ւնց դավթարումը,
Քու տըվածը ուրիշ դիղ է, ուրիշ դիղ։

Ասաց թե՝ քի զարար շինեցիր շահըդ.
Կըտրեցիր ադաբըդ, կըտրեցիր ահըդ.
Մի՛ վիթի արունըդ, մի՛ շանց տա մահըդ.
Քու ասածը ուրիշ տիղ է, ո՛ւրիշ տիղ։

Ասի թե՝ մազիրդ սիրմա սիմ իս անում,
Հենց գիդիս՝ չի՛մ գիդի, յա ր, չիմ իմանում.
Սերըդ ինձ մահ դառավ՝ էլ չիմ դիմանում,
Քու տըվածը ուրիշ դիղ է, ուրիշ դիղ։

Թաքավորի թագի լայիղ քարընն իմ,
Շիրինի պես Փահրադի դիդարընն իմ,
Յիս է՛ն գըլխեն Սայաթ Նովու յարընն իմ,
Քու ասածը ուրիշ տիղ է, ո՛ւրիշ տիղ։

Հիդըս խոսի, մի՛ կենա խըռովի պես.
Տալդա տըվիր, գեմիս տարար, ծովի պես.
Կու մեռնիմ, չի ս տեսնի Սայաթ Նովի պես.
Քու տըվածը ուրիշ դիղ է, ո՛ւրիշ դիղ.
ամա՞ն, ո՛ւրիշ դիղ։

[1756]

www.a-pdf.com

ԱՆԳԻՆ ԱԿԸ ՎԸՐԵԴ ՇԱՐԱԾ

Էս էլ **Դիբալի** հանգում, Արութինի ասած Ատվաձ թողություն շնորհև սիրեկանեմեն սպանած Արութին Սալաթ Նովին: Քրոնիկոնի 446ին:

ԻԱ (34)

Անգին ակը վըրեդ շարած, անբան օսկու ռախտ իս. գո՛զալ.
Ատվաձ քիզ ու նըրան պահե, ում հիդ վուր նըվախտ իս, գո՛զալ.
Բ՚ըլբուլին լիզու շինեցիր՝ դուն վարթի դըրախտ իս, գո՛զալ.
Վարթը մե ամիս ումբր ունե՝ դուն ամենան վախտ իս, գո՛զալ:

Մեմեկ-մեմեկ է՛լ չի ասվի՝ թարիփըդ դառավ քուլիչով.
Պատիրըդ զարով զարբաբով, դոշամեդ խալով խալիչով,
Տախտակնիրը էրծաթեմեն, միխիրը օսկե գուլիչով.
Խոսրով փաչայեմեն թողած, դուն թովուզի տախտ իս, գո՛զալ:

Սկանդալի Զուլֆարի թողած ջավահիր իս, անգին լալ իս.
Դանգը դանգի միչեն հանած, յիդ քաշած մըսխալ-մըսխալ իս.
Ցիփ դուն սեյրանգահը կէհաս, օչ օվ այնումըդ չէ գալիս,
Փաք չունիս փաչազադեմեն, անհամ, առանց սախտ իս, գո՛զալ:

www.a-pdf.com

Թեգուզ մըտոք ճարտար ըլի, կանց Սողոմոն դադա՞ ըլի,
Թեգուզ մարքարիտով լիքը, թեգուզ սադաւի սադա ըլի,
Թեգուզ արեգագ, լուսնիակ, թեգուզ հուրիզադա ըլի,
Էդ քու ամեն մարիփաթով դիփունին կու ախտիս, գո՛զալ։

Յիրգնուց վըրեդ ձուն է էկի՝ փունջ մանիշակ նուր իս, ջա՛նում.
Մոդրդ նըստողը կու էրվի՝ էտ նազի տեր վուր իս, ջա՛նում,
Դիռ Սայաթ Նովեն չէ մեռի՝ դուն ինչի՞ տըխուր իս, ջա՛նում.
Թաք յի՛ս մեռնիմ՝ դուն սաղ ըլիս, գերեզմանըս վաղ տի՛ս, գո՛զալ։

[1758]

www.a-pdf.com

ԷՇԽԵՄԵԴ ՀԻՎԱՆԴԱՑԻԼ ԻՄ

Էսպես Արութինի ասած, քրոնիկոնի 446ին:

ԻԲ (36)

Էշխեմեդ հիվանդացիլ իմ, դիղի համա իմ լալի.
Վախում իմ, թե դարդը հալե, յիղի համա իմ լալի.
Շահի կարքած վեքիլի պես գիղի համա իմ լալի.
Տանեն դուս արածի ընման տիղի համա իմ լալի:

Մե տիղ հուքմի-հեքիմ չը կա՝ դուռը էհամ, կանչիմ հարա.
Վի կենա Լողման հեքիմը, բալքամ դարդիս անե չարա.
Տի՛ս, թե ինչպե՞ս է շըփոթվի, դուն իմ խի՛լքին մըտիկ արա,
Ջուրն էկավ, գերանըս տարավ, ծիղի համա իմ լալի:

Սիրտըս էշխեմեն էրած է, դուգունը, դաղը ի՞նչ կոնիմ.
Վո՞ւնց ղոբա ունե, վո՞ւնց չափար, յիս էնպես բաղը ի՞նչ կոնիմ:
Անղի լարը կըտըրվիլ է, դարդակ սադաղը ի՞նչ կոնիմ.
Նիտըս քարումը կոտրեցի, թիղի համա իմ լալի:

www.a-pdf.com

Ղալամը գիրըս չէ գրում՝ մե չուրացած թանքի նըման.
Խուկիրըս մե-մեկ չի ասվի՝ իմաստուններու բանքի նըման.
Մեչը չիմ կանացի մըտնի, ծովի ծածկած վանքի նըման.
Խոստովանահերրըս հիռացավ, միղի համա իմ լալի:

Գիղումը՝ մելիք-տանուտեր, քաղաք տիղը՝ սուլթան-խան իս.
Բաղումը՝ վարթ ու մանիշակ, սարումը՝ սընբուլ սուսան իս.
Ղաբուլ ունե Սայաթ Նովեն՝ թաք քու ձեռով դուն սըպանիս.
Մեռնելուս համա չիմ հոքում, ցիղի համա իմ լալի:

[1758]

www.a-pdf.com

ՇԱՏ ՍԻՐՈՒՆ ԻՍ, ՇԱԽԱԹԱՅԻ

Էս դիվանի [ն] խիստ լավն [է], օվ օր սովրի օղորմի ասի: Հիմի գուգիմ թե հայեվար ասիմ: Ամեն աստուծ, լիս՝ մրդդըստ վուրթի Արութինս, ալրստուց ինչրու յարսուն տարին գլուխ դրի ամենաց խաղին, ամա սուրբ Կարապիտի կարողութենով սովրեցա քամանչեն ու շո [ն] գուրն ու [թ] ամբուրեն:

ԻԳ (4)

Շատ սիրուն իս, Ծախաթայի, ասողին՝ խար չիս անի.
Անջաղ գըցիս էշխի մեչը, ֆիդ կեհիաս՝ քար չիս անի:

Էշխը հեստի կըրակ ունի վո՛ւնց կու էրվի, **վո՛ւնց կերթա.**
Թեգուզ ինգիմ ծուվի մեչը՝ հովնալու ճար **չիս անի:**

Բաս աշուղը վո՞ւնց դիմանա էտ քու **տըված կեծակուն,**
Դուն ինքնակալ թաքավուր իս՝ **բեհուքազար չիս անի:**

Թե վուր սարերուն հանդիբիս, կու հալիս մումի նըման.
Թե վուր քաղաք տիղ հանդիբիս, կու քանդիս, վար չիս անի:

Իսկի բեհուբազար չունի Ճախաթայի չասողը.
Է՛նդու համա, Սա՛յաթ Նովա, էհտիբար չիս անի:

[1752?]

www.a-pdf.com

www.a-pdf.com

ՅԻՍ ՔՈՒ ՂԻՄԵԹԸ ՉԻ՞Մ ԳԻԴԻ

Թասլիք, էսպես Արութինի [ասած]։

ԻԴ (12)

Յիս քու ղիմեթը չի՞մ գիդի՝
Զավահիր քարի նըման իս.
Տեսնողին Մեջլում կու շինիս,
Լեյլու դիդարի նըման իս։

Աշխարումըս իմը դուն իս,
Բեմուրվաթ իս, մուրվաթ չունիս.
Պըռոշնիրըդ նաբաթ ունիս,
Ղանդ ու շաքարի նըման իս։

Դադա պիտի՝ թարիփդ ասե,
Ակոեքըդ յահութ-ալմաս է,
Ռանգըդ փըռանգի ատլաս է,
Զար ղալամքարի նըման իս։

www.a-pdf.com

Մազիրբդ ընման ոեհանի,
Դուն ուրիշ խիալ մի՛ անի,
Ռահմ արա, հոքիս մի՛ հանի,
Մուրվաթով յարի ընման իս։

Վո՞ւնց դիմանամ էսչափ չարին,
Անկեմես կաթում է արին.
Սա՛յաթ Նովա, նազլու յարին՝
Գրնած նոքարի ընման իս։

www.a-pdf.com

ԹԱՄԱՄ ԱՇԽԱՐ ՊԸՏՈՒՏ ԷԿԱ

Էս էլ **Դիբա ու յինգիդունիայի** հանգում, որ մուսադասու պես կասեն. Արութինի [ասած], քրոնիկոնի 446ին:

Ի Ե (35)

Թամամ աշխար պըտուտ էկա, չը թողի Հաբաշ, նազա՛նի.
Չը տեսա քու դիդարի պես՝ դուն դիփունեն բաշ, նազա՛նի.
Թե՛ խամ հաքնիս, թե՛ զար հաքնիս, կու շինիս ղումաշ, նազա՛նի.
Էնդու համա քու տեսնողը ասում է՝ վա՜շ-վա՜շ, նազա՛նի:

Դուն պատվական ջավահիր իս, է՛րնեկ քու առնողին ըլի.
Օվ կու գըթնե՝ ա՛խ չի քաշի, վա՜յ քու կորցընողին ըլի.
Ափսո՛ւս վուր շուտով մեռիլ է, լուսը քու ծընողին ըլի.
Ապրիլ էր, մեկ էլ էր բերի քիզի պես նաղաշ, նազա՛նի:

Դուն է՛ն գըլխեն ջունարդար իս, վըրեդ զարնըշան է բաշած.
Դաստամազիդ թիլի մեչը մե շադա մարջան է քաշած.
Աճկիրըդ օսկե փիալա՝ չարխեմեն փընջան է քաշած.
Թերթերուկըդ՝ նիտ ու նաշտար, սուր ղալամթըրաշ, նազա՛նի:

www.a-pdf.com

Էրեսը՝ փարսեվար ասիմ, ընման է շամս ու ղամարին.
Բարակ մեճկիդ թիրման շալը ընման է օսկե քամարին.
Ղալամը ձեռին չէ կանգնում, մաթ շինեցիր նաղըշքարին.
Ցիփ ընտում իս՝ թութի ղուշ իս, յիփ կանգնում իս՝ ռաշ, նազա՛նի:

Ցիս է՛ն Սայաթ Նովասին չիմ, վուր ավզի վըրա հիմնանամ.
Աչաք միզիդ ի՞նչ իս կամում՝ սըրտեդ մե խաբար իմանամ.
Դուն կըրակ, հաքածըդ կըրակ, վո՞ւր մե կըրակին դիմանամ.
Հընդու ղալամքարու վըրեն ծածկիլ իս մարմաշ, նազա՛նի:

[1758]

www.a-pdf.com

ԳՈՒԶԻՄ՝ ՈՒՄԲՐԸՍ ՀԵՆՑ ԱՆՑ ԿԱՑՆԻՄ

Մուխամմազ. Արութինի [ասած]

ԻԶ (15)

Գուզիմ՝ ումբրրս հենց անց կացնիմ՝ օրրս մուննաթ չը քաշե.
Թեգուզ հազար դարդ ունենամ՝ դարրս մուննաթ չը քաշե.
Ղաստ անիմ, բարու հանդիբիմ՝ չարրս մուննաթ չը քաշե.
Գըլուխրս չարեն ռադ անիմ՝ սարրս մուննաթ չը քաշե:
Էրեսրս հայալու պահիմ՝ արրս մուննաթ չը քաշե:

Հիռու տիղացեն գալիս իմ, խիլքի ղարար շահ իմ բերի.
Հուչրես լիքն է անգին լալով, ջավահիրչուն ահ իմ բերի.
Հընդու միչեմեն դուս էկած ղիմեթով մաթահ իմ բերի.
Տեսնողը թահրը չի գիդի՝ մե հեստի քարգահ իմ բերի.
Հեստի տիղ դուքան բաց անիմ՝ զարրս մուննաթ չը քաշե.

Մե բիռրս փռանգի ատլաս է, տալիս է շովղ ու շափաղաթ.
Մե բիռը զար ղալամքարի, տիղ ունի վունց օր մաքաղաթ.
Մե բիռրս Չինումաչինին կու առնե թամամ փարաղաթ.

www.a-pdf.com

Մե բիոը յինգիդունիա, մե բիոը փաչալի խալաթ,
Վո՛ւնց ձիվիլ գուզե, վո ւնց կըտրիլ՝ կարըս մուննաթ չը քաշե:

Մե բիոը ոլբրմըզ ու զափոանգ, մե բիոըն էլ զանչափիլ ա.
Մե քանի բիոըս դարիչին, մե բիոըն էլ ղարանփիլ ա.
Բերնիրը վըրա չէ գալիս, հակնիրըս է սիլա-սիլա.
Անտակ ծովի միչեն հանած ակնիր ունիմ՝ լալ ու թիլա.
Մարքարիտըս շադա-շադա՝ շարըս մուննաթ չը քաշե.

Շատ մարթ էստունք կու իմանա, կոսե՝ հալբաթ սա զանգին ա.
Չին գիդի թե ուշկ ու միտկըս հազար մե բաբաթ հանգին ա.
Մարիփաթով քաղցըր լիզուն դիփունի վըրա ասնգին ա.
Սայաթ Նովեն էնդուր գու յա՝ գրուխը մահու ճանգին ա,
Ասովուծ սիրողն ինձ ազատե՝ յաղըս մուննաթ չը քաշե:

www.a-pdf.com

ԴՈՒՆ Է՛Ն ՀՈՒՐԻՆ ԻՍ

Ղ̂ալափիա-յարանա, Արութինի ասած։

ԻԷ (17)

Դուն է՛ն հուրին իս, վուր գեմի կու զավթե,
Զունքի ինձ զավթեցիր խափով, նազա՛նի.
Արիվիլք, արիվմուտ, հարավ ու հուսիս՝
Զը կա քիզի նըման չափով, նազա՛նի։

Շատ մարթ քու էշխեմեն կու դառնա յիզիդ.
Ա՛րի մե ռահմ արա, լա՛վ կացի միզիդ.
Գուզիմ թե համաշա դամ անիմ քիզիդ՝
Սանթուրով, քամանչով, դափով, նազա՛նի։

Դարդիրըս շատացավ՝ ասիլ իմ ուզում.
Աճկեմես արտասունք հուսիլ իմ ուզում.
Համաշա, յա՛ր, քիզիդ խոսիլ իմ ուզում.
Սիրտըս չէ կըշտանում գաւիով, նազա՛նի։

www.a-pdf.com

Հայալու իս՝ աղաք ունիս, ար ունիս.
Ձեռիդ դաստա կապած սուսանբար ունիս.
Տո՛ւր, ինձի սրպանե՝ իխտիար ունիս.
Հենչանք ըլի՝ կենաս բափով, նազա՛նի:

Սայաթ Նովեն ասաց՝ արզ անիմ խանին.
Ղաբուլ ունիմ՝ քու խաթրու ինձ սրպանին.
Հենչանք ըլի, յա՛ր, գաս իմ դերեզմանին,
Անծիս խուղը վրրես ափով, նազա՛նի:

www.a-pdf.com

ԱՋԱԲ ՔՈՒ ՍԻՐՏԸՆ Օ՞Վ ՇԻՆԻՑ

[Արութին]ի ասած, քրոնիկոնի 447ին։

ԻԸ (43)

Աջաբ քու սիրտը՝ օ՞վ շինից՝ խոնարհից, հիզնից բեդամաղ.
Քանի գուզե մարթ վուր հարփի, վո՞ւնց կուլի վազնից բեդամաղ.
Յա՛ր, յիս քիզ ի՞նչ գեթ իմ արի նըստած իս միզնից բեդամաղ.
Քամեցիր էշխիդ մանգանով, յի՛ս պիտիմ քիզնից բեդամաղ։

Ինչ քիզանից հիռացիլ իմ, իմ ջանումըս ջան չէ մըտի.
Ուշկ ու միտկըս դուն իս տարի, ձեռիս մեչը բան չէ մըտի.
Հենց գիդիմ՝ թե չուրս տարի է քաղաքը քարվան չէ մըտի.
Ռախտարի նըման նըստած իմ՝ իջարից, միզնից բեդամաղ։

Հալբաթ սերը կես է էլի, վուր միզի ատիլ է ուզում.
Չուրս տարեկան էրեխի պես՝ յարըս խըրատիլ է ուզում.
Բըռնիլ է էշխի դանակը, սիրտըս կըտրատիլ է ուզում.
Ճատ մարթ կա նըստած լաց լելիս, գոզալի նազնից բեդամաղ։

www.a-pdf.com

Թեգուզ իմա՛ցի, կարթա՛ցի իմաստնասիրաց առակը.
Էշխեմեդ ջուլուն իմ էլի, վեր էկավ սըրտիս վարակը.
Աստված վըկա, մարթ չը քաշե, դըժար է էշխի կըրակը.
Տեսա արունուտ ջեյրանը՝ հուրսուրդի նիզնից բեդամաղ։

Անց կացավ աշու [նքվան վախտը] [սալբիքը] խաղալ է ուզում.
Հասավ գարունքվան հուսան[ք]ը, բըլ[բուլբն էլ գալ է ուզում].
Սալաթ Նովեն առանց նընգիր ճիտը գ[ըցած լալ է ուզում].
[Զար] կորցըրած խոնթկարի պես նըստա[ծ է խազնից բեդամաղ]։

[1759]

www.a-pdf.com

ԴԱՐԴ ՄԻ ԱՆԻ, ՋԱՆ ՈՒ ՋԻԳԱՐ

Էապես դիվանի, լավ տեղ ասած, որը գրոց հայերեն տառ է, որը վրաց. թուրքերեն էլ ուզում էի հետը խառնել, բայց չխառնեցի:

ԻԹ (5)

Դարդ մի՛ անի, ջան ու ջիգար, միտկըդ դիվաց չը տեսնե.
Աճկ խավրի, անգամ խուլանա՝ էրեսըդ թաց չը տեսնե:

Վո՛ւնց արեգագը շուխկը տա, վո՛ւնց լուսինը լուս անե.
Ավալ քու տեսնողը մեռնի՝ քիզ գըլխիբաց չը տեսնե:

Դուն գըլուխըդ մահի կու տաս, յիս էլ քեզիդ կու մեռնիմ.
Միր էդնեն թամամ՝ աշխարըս սով քաշե, հաց չը տեսնե:

www.a-pdf.com

Թե վուր չը գամ ու չը տեսնիմ, հազար բարաթ բան կոսիա.
Քաշկա մարթ վո՛ւնց գա, վո՛ւնց խոսի, վո՛ւնց քի ուրխրած չը տեսնե:

Աստուծու բերնեմեն առնիս մըխիթարիչ սուրփ հոքին.
Էլ վաղ մեռնի Սայաթ Նովեն՝ ճիտրդ գըցած չը տեսնե:

www.a-pdf.com

ԴԻԲԱ ՈՒ ՅԻՆԳԻԴՈՒՆԻԱ

Էս Դաստա բեդաստա խաղի հանգում:

Ա (7)

Դիբա ու յինգիդունիա, զարբաբ ու զար իս, գովե՛լի.
Հընդու դիարեմեն էկած զար ղալամքար իս, գովե՛լի.
Շատ սովդաքար քիզ կու պըտոռե՝ դու անգին քար ես, գովե՛լի.
Անտակ ծովի միչեն հանած անգին գովհար իս, գովե՛լի:

Յիփ դու բաղչեն սեյրան կէհաս՝ ծովի ընման կուտաս ալիդ.
Գըլուխըդ պահելով արա՝ նամ չը դիբչի խաթ ու խալիդ.
Տեսնողը հեյբաթ կու մընա՝ էտ քու սիրուն մահ-ջամալիդ.
Աշխարումըս նուր դուս էկած՝ թազա նուգբար իս, գովե՛լի:

Ա՛րի, միգիդ մե լավ կացի, ղուրբան ըլիմ մուրվաթումը.
Ման էկա յիրգիր՝ չը ուեսա էտ քու ընման ջուրաթումը.
Վո՛ւնց Հընդու դիարումը կա, վո՛ւնց Փըռանգի սուրաթումը.
Քաշվիլ իս քարգահի մեչը, ուրի՞շ թահար իս, գովե՛լի:

www.a-pdf.com

Թարիփդդ դավթար իմ արի, փիլ պիտի, վուր գիրքը տանե.
Դու քու սըտկի հիդ մի՛ էհա, էտ խիալը սըրտեդ հանե.
Մեճկըդ՝ հադիդեմեն քաշած սիրմա մավթուլի նման է.
Աշխարիս շըվաք իս անում՝ սալբ ու չինար իս, գովե՛լի:

Յիս քիզանից չիմ հիռանա՝ թե չը հասնի մահիս վադեն.
Յիփ մեռանիմ, շա՛ղ տու վըրես դաստամազիդ թիլի շադեն.
Հենչաք ըլի՝ ուրախ կենաս, Սայաթ Նովեն առնե ղադեն.
Ճատ մարթ կոսե՝ թե յար ունիմ, դուն ուրի՞շ յար իս, գովե՛լի:

www.a-pdf.com

ԷՇԽԸ ՎԱՌ ԿՐԱԿ Է

Ղափիա. էապես աշուղ օղլանի օգուտլամա.
Արուեթինք ասած, լավն է։

ԼԱ (18)

Էշխը վառ կրակ է՝ էրվելով գու քա,
Շատ մարթ կոսե՝ յիս յարի յիդ ման գու քամ.
Էս դարդեմեն օվ չէ քաշի՝ վո՛ւչ քաշե,
Օվ յար սիրե, է՛լ չասե թե՝ ջան գու քամ։

Շատ մարթ կա՝ է՛ն գըլխեն սըրտում ունե ղամ.
Բազի մարթ չէ քաշի, էշխեմեն է խամ.
Ինչ ասիս կոնիլ տա՝ սերն է անըսկամ.
Հալվեցա, մաշվեցա, էլ ի՞նչ ջան գու քամ։

Էշխը վուր կա՝ հազար բաբաթ հանգ ունե,
Ուշկ ու միտկը կու քընեցնե՝ բանգ ունե.
Բրոնածը չի թողնի՝ ղայիմ չանգ ունե,
Էնդու համա՝ խան յիդ կեհամ, խան գու քամ։

www.a-pdf.com

Թե դուն էշխի հիդ ման գալը հարցընիս՝
Չի դիմանա Ռոստոմ Զալը՝ հարցընիս.
Թե բեմուրվաթ յարի հալը հարցընիս,
Ասում է թե՝ սուլթան գու քամ, խան գու քամ:

Սայաթ Նովեն ասաց՝ շատի ջանք դընրի,
Մե բափա չը տեսա հում կաթնակիրի.
Օվ օր ինձ չի սիրի՝ յիս էլ չիմ սիրի,
Սերը սեր կու բերե՝ սիրեկան գու քամ:

www.a-pdf.com

ԱՐԻ ՀԱՄՈՎ Ղ̂ՈՒԼԼՈՒՂ ԱՐԱ

Էսպես Արութինի ասած, քրոնիկոնի 446ին։

ԼԲ (37)

Արի համով ղուլլուղ արա, խալխի նոքար Սա՛յաթ Նովա.
Ամեն մարթ չի՛ կանա ճանգի շահով շրքար, Սա՛յաթ Նովա.
Ով քիզի լիղի պարքիվե, դուն տու շաքար, Սա՛յաթ Նովա.
Ղ̂ասաստ արա՝ շուշեդ չը կոտրին, չը խըփին քար, Սա՛յաթ Նովա։

Թեգուզ դըբրատանը պահ տաս՝ ծեծով չի խըրատվի խիվը.
Ինչրու անձեն չը դուս էհա անախտիլի էն չար դիվը.
Բեդասլը՝ ասըլ չի դառնա, թոլով չի սիպտակի սիվը,
Ծուռը փետը չի դըրըստի ռանդան, դուրգար Սա՛յաթ Նովա։

Թեգուզ իմանաս, գիդենաս աստղիրու համբարքը սիրուն.
Անբարի գործը կորած է՝ կարթա Հարանց վարքը սիրուն.
Ավիտարանի խոսկիրը մարքարիտ է, կարքը՝ սիրուն.
Մի ածի խուզի առչիվը լալ ու գովհար, Սա՛յաթ Նովա։

www.a-pdf.com

Թե էս կինաց փառքը չուզիս՝ էն կինաց ալմասը կու տան.
Թե հոքուդ խաթիր շալ հաքնիս՝ զար քաշած ատլասը կու տան.
Թե վուր լալով զըխնում անիս՝ անմահացը մասը կու տան.
Խոստոսվանիս արած միխկըդ՝ չանիս ինքար, Սա՛յաթ Նովա:

Վուր տիղ հարսընիք, վուր տիղ սուք, վուր տիղ սոյբաթ խաղ է ըլում,
Վուր տիղ ժամ, վուր տիղ պատարաք, վուր տիղ սիրով տաղ է ըլում,
Թե վուր հոքուդ կամքն իս անում, մարմինդ բեդամաղ է ըլում,
Վո՞ւր մե դարդին կու դիմանաս դուն ջըրատար Սա՛յաթ Նովա:

[1758]

www.a-pdf.com

ԲԼԼԲՈՒԼԻ ՀԻԴ ԼԱՑ ԻՍ ԷԼԻ

Ռելիր Ղափի-ի հանգում, թապիբ, Ցամանցոց մուղամ:
Քրոնիկոնի 440ին, մարտի վերջին:

ԼԳ (3)

Բլբուլի հիդ լաց իս էլի,
Վարթի նըման բաց իս էլի,
Վարթաշըրով թաց իս էլի,
Թաց իս էլի.
Չկա քիզի նման,
Չկա քիզի նման,
Քի՛զ նման,
Քի՛զ նման,
Դո՛ւն իս աննման:

Սիրունութինդ էլավ արբաբ,
Մազիր ունիս՝ սիմ ու շարբաբ,
Քի սազ գու քա Ղուշլու զարբաբ,
Ղուշլու զարբաբ.
Չկա քիզի նման,
Չկա քիզի նման,
Քի՛զ նման,
[Քի զ նման,
Դո՛ւն իս աննման]:

www.a-pdf.com

Էրեսրդ է շամս ու ղամար,
Ջանրս դուրս գու քա քիզ ամար,
Մեճկիդ ունիս օսկե քամար,
Օսկե քամար.
Չկա քիզի նման,
Չկա քիզ[ի նման.
Քի՛զ նման,
Քի՛զ նման,
Դո՛ւն իս աննման]:

Հաքիդ զարը ալ իս արի,
Բրլբուլի հիդ լալ իս արի,
Բարգ էրեսիդ խալ իս արի,
Խալ իս արի.
Չկա քիզի նման,
Չկա քիզի նման,
[Քի զ նման,
Քի՛զ նման,
Դո՛ւն իս աննման]:

Դարդրս ասիմ՝ գու լան սարիր,
Էս ի՞նչ բան էր, վուր դուն արիր,
Սայաթ Նովուն ջունուն արիր,
Ջունուն արիր.
Չկա քիզի նման,
Չկա քի[զի նման,
Քի՛զ նման,
Քի՛զ նման,
Դո՛ւն իս աննման]:

[1752]

www.a-pdf.com

ԱՇԽԱՐԸՍ ՄԵ ՓԱՆՋԱՐԱ Է

Էսպես Արութինի ասած, ապրիլի սկզբին,
քրոնիկոնի 447ին:

ԼԴ (53)

Աշխարքս մե փանջարա է, թաղերումեն բեզարիլ իմ,
Մըտիկ տըվողը կու խուցվի, դաղերումեն բեզարիլ իմ.
Էրեգ լավ էր կանց վուր էսօր, վաղերումեն բեզարիլ իմ.
Մարթ համաշա մեկ չի ըլի, խաղերումեն բիզարիլ իմ:

Դովլաթը էհտիբար չունե, յիփ օր կէրթա իր շըքարով,
Լավ մարթն էն է՝ գլուխը պահե աշխարումըս էհտիբարով.
Աշխարքս միզ մընալու չէ՝ իմաստնասիրաց խաբարով.
Գուզիմ թըռչի բըլբուլի պես, բաղերումեն բեզարիլ իմ:

Օ՞վ կոսե թե յիս կու ապրիմ առուտեմեն ինչրու մուտը,
Աստըձու ձեռումը հիշտ է մարթու աշխարք յիլումուտը.
Ղուրթըս էնդուր ճանփա չէ գնում՝ շատացիլ է խալխի սուտը.
Քըսանը մը ղուլ չին պահում, աղերումեն բեզարիլ իմ:

www.a-pdf.com

Աշխարքս միզ մընալու չէ, քանի նըստինք զող ու սափին.
Հում կաթնակիր Աթամի զաթ, նա՛ղլաթ ըլի էտ քու բափին.
Համփիրութինքս հատիլ է, չիմ դիմանում խալխի գափին.
Դոստիրքս դուշման ին դառի, յաղերումեն բեզարիլ իմ։

Սայաթ Նովեն ասաց՝ դարդքս կանց մե ճարը շատացիլ է.
Զունիմ վաղվան քաղցքր փառքս, հիմի դարը շատացիլ է,
Բլբուլի պես էնդուր գու լամ՝ վարթիս խարը շատացիլ է.
Չին թողնում վախտին բացվելու, քաղերումեն բեզարիլ իմ։

[1759]

www.a-pdf.com

ՊԱՏԿԻՐՔԸԴ ՂԱԼԱՄՈՎ ՔԱՇԱԾ

Էս էլ **Դիբա ու յինգիդունիայի** հանգում. Արութինի [ասած], մարտի վերջին, քրոնիկոնի 447ին:

ԼԵ (2)

Պատկիրքդ ղալամով քաշած, թահրդ ռանգեռանգ իս անում.
Էրեսիդ խալը ծածկում է՝ մազիրդ խաւիանգ իս անում.
Բացվիլ իս կարմիր վարթի պես, բլբուլի հիդ հանգ իս անում.
Սկոեքդ օսկումը շարած, պըռոշդ մահանգ իս անում:

Էրեսդ նուր լուսնի նըման՝ քանի կէհա կու բոլորվի,
Դաստամազդ նամ չի ուզի՝ առանց հուսիլ կու օլորվի,
Էնդու համար քու տեսնողը իր ճանփեմեն կու մոլորվի.
Յիփ մըտնում իս մեջլիսումը, շանգ շուխի շաբանգ իս անում:

Էրեսդ տեսնելու գու քան քաղաք քաղկով, գիղ՝ գիղի պես.
Մեռնողը քիզմեն կու առնե անմահական դիղ՝ դիղի պես.
Յիփ տիղեմեդ ժաժ իս գալի, շըխշըխկում իս ջիղ՝ ջիղի պես.
Ի՞նչ կոնիս սանթուր քամանչեն, զուքսդ չոնգուր չանգ իս անում:

www.a-pdf.com

Ծուցիդ մեչը վարթ, մանիշակ, սընբուլ ու սուսան իւ շինի.
Քու տերը բաղընն ի՞նչ կոնե՝ քու հուտը ռեհան իս շինի.
Քամին մեչը անց է կենում՝ մազիրընդ յիլքան իս շինի.
Աշխարքը ծով, դուն մեչը նավ՝ ման իս գալի, լանգ իս անում:

Տասնեմեդ մեկը չին ասի, թեգուզ աշխարընս քիզ գովին.
Նովափար, ծաղիկ ծովային, մանիշակ բաց արած հովին.
Բաս քու էշխին վո՞ւնց դիմանամ, ջուրը տանե Սայաթ Նովին.
Թե տեսնողընդ մեկ էլ տեսավ՝ դիվանա դաբանգ իս անում:

[1759]

www.a-pdf.com

ԷՇԽԵՄԵՆ ԷՆՊԵՍ ՎԱՌՎԻԼ ԻՄ

Էս երկու խաղը* էն ձենով՝ Բլբուլը նստած է վարթին, լավ կանչեր նա վարթի համա. Արութինի ասած, ապրիլի 5, քրոնիկոնի 445ին:

ԼԶ (28)

Էշխեմեն էնպես վառվիլ իմ՝
Վունց Մեջլում՝ յա՛ր իմ ասում,
Էնտիղեմեն,
[Էնտիղեմեն]:
Գոզալի տիսուն կարոտ իմ՝
Ցիդ քաշվի, սա՛ր, իմ ասում,
Էնտիղեմեն,
Էնտիղեմեն:

Ղուրբան իմ ծուցիդ ընոանը,
Հոքիս տամ շիմշատ կրոանը,

---

* Տես՝ Զ(27) խաղը: **Ծ. խ.:**

www.a-pdf.com

Թաք պառկիմ յարի դրուանք
Գըլխոքըս քա՛ր իմ ասում,
Էնտիղեմեն,
Էնտիղեմեն:

Հաքիլ իս ատլաս խասեմեն,
Խըմեցուր ձեռիդ թասեմեն,
Համաշա էշխիդ բասեմեն
Էրվում իմ, ճա՛ր իմ ասում,
Էնտիղեմեն,
Էնտիղեմեն:

Բաղ կու սիրիմ, յիս բաղմնան չիմ
Բաղի տիրուչը ճանանչ իմ.
Բըլբուլ իմ՝ սիրով վարթ կանչիմ,
Ցիդ քաշվի, խա՛ր, իմ ասում,
Էնտիղեմեն,
Էնտ[իղեմեն]:

Մեջլիսներու խաղը դուն իս,
Վանքերումը տաղը դուն իս,
Սայաթ Նովու բաղը դուն իս,
Կարոտ իմ, բա՛ր իմ ասում,
Էնտիղեմեն,
[Էտիղեմեն]:

[1757]

www.a-pdf.com

ԲԵԴԱԼԻՆ ՎՈՒՐ ԽՈՍԵՑԸՆԻՍ

Քրոնիկոնի 447ին:

ԼԷ (44)

Բեդալին վուր խոսեցընիս՝ լալ անիլը ինչի՞ն է շահ.
Ռանգը վուր սեվադեն ընգնի՝ ալ անիլը ինչի՞ն է շահ.
Մարթ վուր քու խոսկով մեռանի՝ գալ անիլը ինչի՞ն է շահ.
Պատանքը մե ռանգն է հերիք՝ չալ անիլը ինչի՞ն է շահ:

Մարթ պիտի թանգ հախ տա, առնե խոսկիրը փիր ուստադեմեն.
Ռանգը ռանգերուն ծածկում է, հուշրեքը լիքն է սադեմեն.
Թեգուզ զար զարբաբ հաքցընիս, վուր չը լի ասըլզադեմեն.
Սիվ արաբի ճակտի վըրա խալ անիլը ինչի՞ն է շահ:

Լավ մարթն էն է՝ սիրով անե բարի հրիշտակներու կամքը.
Իմաստուններիրը չը տեսան էս աշխարիս հուտն ու համքը.
Զուրս գըլխանի ռաշի վըրեն աջալը դըրիլ է թամքը.
Աշխարըս միզ մընալու չէ՝ մալ անիլը ինչի՞ն է շահ:

www.a-pdf.com

Մեր ու մանուկ բաժանվեցան, մանուկն էնդուր ունի լալու.
Սատանեն մե դամբ է դրրի Աթամի զաթը վուրսալու.
Շատը սատանեն է տանում, վիրչը մընում է վա՜յ տալու.
Վուր չէ Ուռնիելի ընման՝ կալ անիլը ինչի՞ն է շահ:

Շուռ էրիտ չարխը-փալագը, դովլաթը միզնից խրոով ա.
Ում հաքին հին շալ ին տեսնում, է՛լ չին ասում, թե էս օ՛վ ա.
Յարովրդ մեկ մրհլամ չունիս, էնդուր գու լաս, Սա՛յաթ Նովա.
Ջարեքը դիղրդ չին գիդի՝ փալ անիլը ինչի՞ն է շահ:

[1759]

www.a-pdf.com

ԷՇԽԵՄԵԴ ԱՆԴԱՆԱԿ ԷԼԱ

Էս էլ **Դիբա ու յինգիդունիայի** հանգում. Արութինի ասած. սեպտեմբերի 6, քրոնիկոնի 446ին:

ԼԸ (38)

Էշխեմեդ անդանակ էլա, յի՛կ մորթե՝ ջալլաթը դո՛ւն իս.
Մի՛ սրպանի հասրաթեմեդ՝ սրրտիս խըջալաթը դո՛ւն իս.
Թաքավուրի քարխանեմեն դուս էկած խալաթը դո՛ւն իս.
Հինդ ու Հաբաշ, Արաբըստան, Խորասանու Քալաթը դո՛ւն իս:

Բարգ էրեսըդ կըրակ ընընգնած օսկու ընման ջիռանում է,
Էնդու համա քու տեսնողի խիլքը գլխեն հիռանում է.
Օվ չէ տեսի, տիսդ է ուզում, օվ տեսնում է՝ միռանում է.
Օսկե վարաղով վարաղնած սուրաթ-մաքաղաթը դո՛ւն իս:

Շատը քու էշխեն կու մեռնի, չի դիմանա ինթիզարի.
Տարենը մե գամ բաց կուլիս մաթահ շահրադել բազարի.
Էրնեկ ըլի քու տիրուչը՝ մըտիկ տալեն չի բեզարի,
Ամառն ու ձըմեռը ծաղկած գուլբաղ ու բաղաթը դո՛ւն իս:

www.a-pdf.com

Մուզդ ունե է՛ն նաղրշքարը՝ վուր թահրդդ ղալամով հանա,
Ճակտեդ ունքդդ չի կարա գա, քանի գուզե վուր շատ ջանա,
Էնդու համա ծարավ մարթը քու ջրեմեն չի կըշտանա,
Ցիրազու շուշումըն ածած՝ նաբաթե շարբաթը դո՛ւն իս։

Էրնեկ մոդդդ նըստող յարին, վուր քիզի պես համդում ունե.
Խալան յարին չէ ռաստ էկի, քիզանից խաթըրջամ ունե.
Սայաթ Նովեն, վուր քիզ ունե, աշխարումըս ի՞նչ ղամ ունե.
Խաթաբանդով չարա-չարդաղ, քոշկ ու ամարաթը դո՛ւն իս։

[1758]

www.a-pdf.com

ԱՋԱԲ ՔԱՆԻ ԺԱՄԱՆԱԿ Է

Էսպես Արութինի ասած, քրոնիկոնի 443ին:

ԼԹ (25)

Աջա՜ւ քանի ժամանակ է, թաք գիդենամ տարիդ, էրնեկ.
Վո՛ւնց ուտիլ գուզե, վո՛ւնց խմիլ՝ մոդըդ ընստող յարիդ էրնեկ,
Բացվիլ իս կարմիր վարթի պես, փաթուր սուսանբարիդ էրնեկ.
Բըլբուլին լալով ման կոծիս գիշիր-ցերեկ, խարիդ էրնեկ:

Հուտըդ աշխարըս բըռնիլ է, բերնումդ ունիս զանջափիլը.
Կանց քիզ լավ հուտ չի ունենա Հընդու էկած ղարանփիլը.
Գիշիր-ցերեկ զուքսիդ մեչն իս, ձեռիդ ունիս [հուտով հիլը].
Դիբչում է ալ պըռոշներուդ՝ ունքիդ-քամանդարիդ էրնեկ:

Ճատը հասրաթեդ կու մեռնի, սըրտումը կունենա զարուր.
Օվ չէ տեսի՝ մե՛կ ա՞խ կոնե, օվ կու տեսնե՝ հազար-հարուր.
Քու զաթը քու ընման կու լի, կըշտիդ ունիս օսկե բարուր.
Բալքա մեկ էլ դեդեն բերե՝ ընման բարեբարիդ էրնեկ:

www.a-pdf.com

Մե նաղշըդ Արաբ անցկացավ, մե նաղշըդ Հընդըստան գընաց.
Մե նաղշըդ Ղըրիմ անց կացավ, մե նաղշըդ Դաղըստան գընաց,
Մե նաղշըդ Ուրումել կացավ, մեկը Փըռանգըստան գընաց.
Օվ քու սուրաթը տեսնում է, ասում է՝ թահարիդ էրնեկ·

Ա՛րի նըստի, Սա՛յաթ Նովա, խոսկըդ ասա լամզ ու բասով.
Սազին խիլքըդ չը տանում տաս էտ խիալով, էտ հավասով.
Ձեռիդ բըռնածը բըրոլ է, ա՛ծա, խըմինք օսկե թասով.
Շատ աջաիբ մեյմանդար իս, սուփրի սազանդարիդ էրնեկ:

[1755]

www.a-pdf.com

ԴԱՍՏԱՄԱԶԸԴ ՍԻՄ ՈՒ ՇԱՐԲԱԹ

Էսպես Արութինի ասած, մարտի 1, քրոնիկոնի 442ին: Էսպես թասլիք-մուխալիփի հանգում, հինգ յափրաղլի [տերևավոր], քրոնիկոնի 442ին:

Խ (22)

Դաստամազըդ սիմ ու շարբաթ, նամ շաղ էկած ռեհան է,
Ունքիրըդ ղալամով քաշած, էրեսըդ զարնըշան է.
Ակըռքնիրըդ լալ ու մարքրիտ, ռանգիդ մարթ կու էրանե:
Թաք յիս մեռնիմ՝ դուն սաղ ըլիս, էշխըդ իմ գերեզման է.
Նազիդ մեռնիմ, նազ մի՛ անի, նազըդ ինձ կու սըպանե:

Վուր բըլբուլին վարթը [սիրե], աբա խարին թամամ է.
Ումն օր կանց միզի լավ սիրիս՝ աստված չարին թամամ է.
Դիդարեդ կարոտ մընացի՝ էրկու տարին թամամ է:
Թաք յիս մեռնիմ՝ դուն սաղ ըլիս, էշխըդ իմ գերեզման է.
Նազիդ մեռնիմ, նազ մի՛ անի, [նազըդ ինձ կու սըպանե]:

www.a-pdf.com

Թառամեցավ կարմիր վարդը, բաղը բըլբուլ չէ գալի.
Սիրտըս յարալու շինեցիր, էրվում իմ մըրմնջալի.
Էշխեմեդ հիվանդացիլ իմ, պառկած իմ դըժար հալի:
Թաք յիս մեռնիմ՝ դուն սաղ ըլիս, էշխըդ իմ գերեզման է.
Նազ[իդ մեռնիմ, նազ մի՛ անի, նազըդ ինձ կու սըպանե]:

Մեջլումի պես սարն իմ ընգի, Լեյլումեն խաբար չունիմ.
Էշխեմեդ սիրտըս էրվում է, հովանալու ճար չունիմ.
Ապտված վըկա, աշխարումըս յիս քիզ ավել յար չունիմ:
Թաք յիս մեռնիմ՝ դուն սաղ ըլիս, [էշխըդ իմ գերեզման է.
Նազիդ մեռնիմ, նազ մի՛ անի, նազըդ ինձ կու սըպանե]:

Սայաթ Նովեն ասաց. զա՛լում, աճկըս լալիս է արին.
Հում կաթնակիր Աթամի զաթ, նա՛ղլաթ քու էհտիբարին.
Իդրարեմեն շուտ անցկացար, ո՞ւր է յարասուն տարին:
Թաք յիս մեռնիմ՝ դուն սաղ ըլիս, էշխըդ իմ գերեզման է.
Նազիդ մեռնիմ, նազ մի՛ անի, նազըդ ինձ կու սըպանե:

[1754]

www.a-pdf.com

ՅԱՐ, ՔԻԶ ԻՍԿԻ ԶԱՎԱԼ ՉԸԼԻ

Էս էլ **Դիբա ու յինգիդունիայի** հանգում. Արութինի ասած, հոկտեմբերի 9, քրոնիկոնի 446ին:

ԽԱ (39)

Յա՛ր, քիզ իսկի զավալ չըլի՝ քու դուշմընին շատ բաց արած.
Հուտըդ աշխարըս բըռնիլ է՝ բալասանի ծառ բաց արած.
Թըխտիրըդ օսկե վարաղով Ասմավուր իս՝ ճառ բաց արած.
Տեսնողը շարքը չի գիդի, Լուսնաստըդ պայծառ բաց արած:

Ամեն մարթ չի կարա մըտնի՝ էշխիդ ջուրը յիդ է, զա՛լում.
Մըտնում է յարսուն կարմուջը, չասիս թե մե գիդ է, զա՛լում.
Ունքիրըդ սալիդ ապաղի է, թերթերուկըդ նիտ է, զա՛լում,
Մըտնողը էլ չի դուս էհա, դուռ, մահու պատճառ, բաց արած:

Բարակ մեճկըդ ղարդուղամիշ, էրեսըդ թայգուլի նըման.
Օրը յարսուն ռանգ կու փոխիս, վունց մեկը չէ տուլի նըման.
Յիփ խաղում իս՝ վառվըռում իս օցի բերնի հուլի նըման.
Մութը տիղը լուս իս տալի առանց կըրակ՝ վառ բաց արած:

www.a-pdf.com

Բարովին բարով չիս տալի՝ թաքավորի սալամի պես.
Ձեռնիրը դ սիպտակ մաքաղաթ, լիզուդ օսկե ղալամի պես.
Ձար ու զարբաբե դըրոշա՝ ման իս գալի ալամի պես.
Տեռնողը էնպես կիմանա՝ շահ իս գալի, ջառ բաց արաւծ:

Ցա՛ր, քիզանից հիռանալըս մեռնելուս վըրա դըժար ա.
Լիզուդ քաղցըր, խոսկըդ քաղցըր, ակըռքնիրըդ անգին քար ա.
Ցիրիք քսան ու տասը խալը էրեսիդ բոլորքը շար ա,
Վունց օր Սայաթ Նովու լիզուն յոթանասուն բառ բաց արաւծ

[1758]

www.a-pdf.com

ՔԱՆԻ ՎՈՒՐ ՋԱՆ ԻՄ

Էսպես Արութինի ասած, **Թասերը չինի** [խաղի] հանգում։
Մայիսի 2, քրոնիկոնի 445ին։

ԽԲ (29)

Քանի վուր ջան իմ,
Յա ր, քի ղուրբան իմ,
Աբա ի՞նչ անիմ.
Արտասունք անիմ,
Շատ հոքուց հանիմ,
Յա՛ր, ղադեդ տանիմ.
Ասիր՝ ջեյրան իմ.
Թուղ քի սեյր անիմ,
Յա՛ր, մըտիկ անիմ։
Մո՛ւտ բաղչեն նազով,
Քիզ գովիմ սազով,
Յա՞ր, իլթիմազով։

Մազիրըդ դաստա,
Պըռոշըդ փըստա,

www.a-pdf.com

Հեյրանի վախտ է.
Յի՛կ ընգնինք չոլը,
Վուր հասնինք գոլը,
Ջեյրանի վախտ է.
Բըլբուլը՝ վարթին,
Վարթը՝ բաղաթին,
Սեյրանի վախտ է։
Մո՛ւտ բաղչեն նազով,
Քիզ գովիմ սազով,
Յա՜ր, իլթիմազով։

Շուռ գանք հանդամով,
Յիրգնային նամով
Թուփը բացվիլ է.
Խաղ կանչինք հանգով,
Լալեքը ռանգով,
Վարթը բացվիլ է.
Սուսան սընբուլով,
Հ՝ալարիբ բըլբուլով
Բաղը լըցվիլ է։
Մո՛ւտ բաղչեն նազով,
Քիզ գովիմ սազով,
Յա՜ր, իլթիմազով։

Պատվական շինած,
Նըման ընմանած
Լեյլու դիդարին.
Յա՛ր, ուշկըս գընաց՝
Մազիրըս մընաց
Վրա մուհաջարին.
Բաղը զարթարած,
Բըլբուլը քընած

www.a-pdf.com

Վարթի սաջարին։
Մո՛ւտ բաղչեն նազով,
Քիզ գովիմ սազով,
Յա՜ր, իլթիմազով։

Հաքիլ իս ատլաս,
Թուրլու զար ու խաս՝
Սալբու դալ բովուն.
Ջեռիդ ունիս թաս,
Լըցնիս ու ինձ տաս,
ՙԼուրբան իմ մովուն.
Թաք դուն բաղչեն գաս՝
Անիս մասնեմաս
Քու Սայաթ Նովուն։
Մո՛ւտ բաղչեն նազով,
Քիզ գովիմ սազով,
Յա՜ր, իլթիմազով։

[1757]

www.a-pdf.com

ՄՈԴԸԴ ՆԸՍՏՈՂԸ ԿՈՒ ՀԱՐՓԻ

Էսպես Արութինի ասած, քրոնիկոնի 446ին:

ԽԳ (40)

Մոդըդ նըստողը կու հարփի՝ դուն բանգ ու բոզա իս, ա՛զիզ:
Դիվանա Փահլուլ կու շինիս, տեսնողին՝ ազա իս, ա՛զիզ.
Ինչ տիղ կու լիս շնուք կու տաս՝ մեջլիսի մազա իս, ա՛զիզ.
Մազեն մե սահաթ լավ կու լի, դուն համան թազա իս, ա՛զիզ:

Մե խոսկըդ կանց շաքար քաղցըր, մե խոսկըդ վառ՝ քուրա-քուրա.
Մե նըմանըդ ռաշի նըման, մե նքմանըդ ջուրա-ջուրա.
Մարքարիտով լիքը կալ իս, սադափնիրըդ թուրա-թուրա.
Էրծաթե կոխպեքով կոխպած, դուն օսկե ռազա իս, ա՛զիզ:

Էրեսըդ առուտվան արիվ՝ քանի կէհա կու զարգանա.
Թաքավորի քարխանի զար՝ ծառը ծառեն չի՛ թարգանա.
Թե սուչ ունենամ սրպանե, թե չէ նահախ մի՛ բարգանա.
Մե ձեռըդ ջուր, մե ձեռըդ արուն՝ ջալլաթի ջազա իս, ա՛զիզ:

Տեսնողք նաղշրդ կու տրնդղե էն [թովուզի բրմ]բուլի պես,
Զրնի տակեն նուր դուս էկած, արիվ դիբած սրնբուլի պես.
Թուղ վրրեդ լալով պրտուտ գամ, վարթի կարոտ բրլբուլի պես.
Դուն ինձ շուտով մի՛ թրոցրնի՛ շավարդան-բազա իս, ա՛զիզ:

Էշխեմեդ հիվանդացիլ իմ, վո՛ւնց զարար, վո՛ւնց շան ին ասում.
Հեքիմնիրրս ափսուսում ին՝ ծրնգան տալով վա՜յ ին ասում.
Կանչողրս դարդակ է գրնում՝ «ա՜խ, Սայաթ Նովա» ին ասում.
Թաք դուն տիս գաս, վիր կու կենամ, թե սազիս՝ սազա իս, ա՛զիզ:

[1758[1]

www.a-pdf.com

www.a-pdf.com

ԱՆԳԱԾ ԱՐԱ ԲԱՐԻԹԱՎՈՒՐ

Էսպես բարիթավուր, լավ յարանա, Արութինի ասած: Էսպես լավ բարիթավուր է, ինչ որ աշուղ օղլանի գլխով անցնելու է, բոլորը գրած է սրա մեջ:

ԽԴ (6)

[Ա]

Անչաճ ա՛րա բարիթավուր,
Գընա՛, հիդը խաղ մի՛ անի.
Յարի սիրտը դաղ մի՛ անի,
Էտ կըրակը չաղ մի անի.
Չաղ շուտ արի
Յարսուն տարի,
Յարին բեդամաղ մի՛ անի:

Բեդամաղ չըլի միզանից,
Չը հիռանա անմիղ բանից.
Յարը նազով հոքիս հանից.
Հանած ծառ է,

www.a-pdf.com

Էշխով վառ է.
Չի՛ վախենա սուլթան-խանից։

Խանի պես դիվան իս անում,
Ճանիզադի պես սան իս անում,
Էտ ի՞նչ թավուր բան իս անում.
Բանդդ բանդ է,
Պրոոշդդ ղանդ է,
Քաղցդդ լիզվով ջան իս հանում։

Ջան չունիմ յարի ձեռնեմեն,
Հիվանդ իմ էշխի կրոնեմեն,
Դիդ անիս ծուցիդ նրոնեմեն.
Նրոդիդ օսկով,
Քաղցդդ խոսկով.
Կրակի իս վեր ածում բերնեմեն։

Բերնիդ մեչը լալ է, գո՛զալ.
Հաքիդ զարը ալ է, գո՛զալ,
Էտ ի՞նչպես խիալ է, գո՛զալ,
Էտ խիալով նազ իս անում.
յա՛ր, ամա՞ն։

[Բ]

Նազ իս անում, իխտիար իս,
Հիդ աշխարիս բարեբար իս.
Հընոր էկած ղալամքար իս,
Էալամ քաշած.
Ջանս է մաշած,
Ջանս հանեցիր՝ ջադուքար իս։

www.a-pdf.com

Զադուքար իս փել ու փանդով,
Ծիրազու շուշա իս ղանդով,
Այնաբանդ իս խաթաբանդով.
Զամ-հալիլա,
Լալ ու թիլա.
Զանս հանեցիր էտ փըրսանդով:

Էտ փըրսանդով համ իս անում,
Դաստամազըդ նամ իս անում,
Աբա խաթրըդ ջամ իս անում.
Զամ իս չինի,
Դոշդ է սինի.
Ծամամնիրըդ դամ իս անում:

Դամ ու դովրան իս համաշա,
Դաստա-դաստա մազըդ քաշ ա,
Հաքաճըդ զար ու ղումաշ ա,
Ղումաշ՝ զարով.
Գու լա տարով՝
Օվ քիզի գու քա թամաշա:

Թամաշա իս, վարթի ռանգ իս,
Ծով տեսած օսկու մահանգ իս,
Սանթուր ու քամանչա, չանգ իս,
Բարակ ձենով սազ իս անում.
յա՛ր, ամա՞ն:

[Գ]

Սազ իս անում, դուր իս գալի.
Բաղչի մեչը ջուր իս գալի.

www.a-pdf.com

Փունջ մանուշակ նուր իս գալի.
Նուր գովելի,
Անպատմելի.
Վարթի մեչը շուռ իս գալի:

Շուռ իս գալի բլլբուլի պես.
Հուտը գու քա սընբուլի պես,
Սուփրի մեչը թայգուլի պես.
Դաստա կապած,
Ռեհնին կըպած,
Բաց իս էլի դուն գուլի պես:

Գուլ իս կոկոր տերիվակալ,
Չիս թառամի, արիվակալ,
Թաքավուր իս բարիվակալ.
Բարով տամ քիզ,
Մըտիկ տո՛ւ միզ՝
Չէ թե ամսով, օրիվակալ:

Օրն ի օրը շատանում իս,
Էշխի մեչը մոդանում իս,
Սըրտիս դարդը յիդ անում իս.
Յիդ արա, տի՛ս,
Թե թաբիբ իս.
Խիլքը գլխես հա՞ տանում իս:

Տարար խիլքըս, հեյրան արիր.
Բարակ մեճկըդ սեյրան արիր.
Էտ կըրակով բիրյան արիր.
Հալբաթ մահըս հազ իս անում.
յա՛ր, ամա՞ն:

www.a-pdf.com

Հազ չունիմ խային յարեմեն.
Ձիս ջոգվում անգին քարեմեն.
Թաք չանց կենաս իղրարեմեն.
Իղրար անիս,
Հոքիս հանես,
Պըրծընիմ անուզարեմեն:

Անուզար իմ քաշում, ամա՜ն,
Քիզնից ուրիշ չունիմ գուման.
Ծուցիդ մեչը չայիր-չիման,
Ձիման ասիմ,
Մուրախաս իմ.
Սըրտումս ունիմ իղրար իման:

Իղրար իմանեն չանց կենամ.
Առանց քիզ մին օր վո՞ւնց կենամ.
Բերնումըս դընիմ սանձ՝ կենամ.
Սանձահարիմ,
Սիրտըս վառիմ.
Անհընանալու գանձ կենամ:

Գանձ իս սիրով ու սիրեկան,
Ղիմեթ ունիս անգին ական,
Լալ ու ջավահիր պատվական.
Պատիվ անիմ,
Քանի չան իմ,
Ձուն աշխարս է անցողական:

Անց մի՛ կենա, թե հալալ իս,
Մի մոր ծընած, մի մոր դալ իս.

Ղաբուլ ունիմ, թեգուզ հալիս,
Զունքի իլթիմազ իս անում.
յա՛ր, ամա՞ն:

www.a-pdf.com

[Ե]

Իլթիմազըս Է՛ս է, ջա՛նում.
Օրըս հիդրդ կես է, ջա՛նում.
Էշխը էստու պես է, ջա՛նում.
Ջանում՝ ջան իս,
Աննըման իս.
Աշխարս ուս ու ոտիս է, ջա՛նում:

Ուս ու տիս արա, իմացի.
Մըտիկ արա աղ ու հացի.
Թաք իղրարին դըրուստ կացի.
Կաց իղրարին,
Անլի շարին.
Ցիփ մեռանիմ, վըրես լացի:

Լաց ըլիս՝ աճկըդ զայ անիս,
Դաստա ռեհանըդ փայ անիս,
Արտասունքնիրըդ չայ անիս.
Զայ ու ջուր իս,
Խիստ տըխուր իս.
Ադալաթըդ շահի անիս:

Շահի զուրիաթ դաբաղը
Չի հարցընի դուգուն դաղը.
Վա՛յ թե Է՛լ չը խոսիս վաղը.

Վաղը գու քամ,
Նըստիմ ու լամ,
Ասիմ բարիթավուր խաղը։

Խաղ իս էլի, Սա՛յաթ Նովա.
Դաղ իս էլի, Սա՛յաթ Նովա.
Բաղ իս էլի, Սա՛յաթ Նովա.
Գլուխդ փիանդազ իս անում.
յա՛ր, ամա՜ն։

www.a-pdf.com

www.a-pdf.com

ԽԸՄԵՑՈՒՐ ՁԵՌԻԴ ԹԱՍԵՄԵՆ

Էսպես թալիք, Արութինի ասած, մայիսի 10, քրոնիկոնի 446ին:

ԽԶ (32)

Խ ըմե՛ցուր ձեռիդ թասեմեն,
Զո՛ւր իմ ասում, [տո՛ւր քասեմեն.
Մըն]ացի սըկու մասեմեն.
Աճկի՛լուս, քուր իմ ասի,
[Հուր չիմ ասի,
Հուր] չիմ ասի,
Թուր չիմ [ասի], տուր չիմ ասի:

Գո՛զալ, աստված քիզի լավ տա,
Զուզողի աճկերուն ցավ տա.
Անգալի խոսկին մի՛ ավտա.
Աճկիլուս, ո՞ւր իմ ասի,
Զուր չիմ ասի,
Զուր չիմ ասի,
Զու[ր չիմ ասի, սուր չիմ ասի]:

www.a-pdf.com

Օվ քիզի այան մըտիկ տա,
Աբելին՝ Կայան մըտիկ տա.
Ինչ աճկ քիզ խայան մըտիկ տա,
Զանում յար, կուր իմ ասի.
Նուր չիմ ասի,
Նու[ր չիմ ասի,
Զուր չիմ ասի, նուր չիմ ասի]:

Օվ օր ինձ շինից դիվանա՝
Սուրփ Կարապիտեն խիվանա.
Վադի էրեսը սիվանա.
Աճկիլուս, [մ]ուր իմ ասի.
[Զ]ուր չիմ ասի,
[Զուր չիմ ասի,
Նուր չիմ ասի, զուր չիմ ասի]:

Էշխեմեդ խըմած մաստ էկած,
Գըլուխըս մահին [ռաստ] էկած,
Սայաթ Նովեն իմ տիսդ էկած.
Աճկիլուս, ո՞ւր իմ ասի,
Սուր չիմ ասի,
Սուր չիմ ասի,
Տուր չիմ ասի, [հուր չիմ ասի]:

[1758]

www.a-pdf.com

ԱՃԿ ՈՒ ՈՒՆՔԸԴ ՎԵՐ ԻՍ ԹՈՂԻ

ԽԷ (47)

Աճկ ու ունքըդ վեր իս թողի, հուքմըդ վըրես խարի բաբաթ,
Աչաբ քիզ ի՞նչ գեթ իմ արի, խոսում իս դուն չարի բաբաթ.
Օվ քիզի խայան մըտիկ տա, սիրտը դառնա քաթի բաբաթ,
Թեգուզ պահե, թեգուզ սպանե, դըռանըդ նոքարի բաբաթ:

Դըռանըդ նոքար չիս պահի, թաքավուր իս՝ ղուլ սըպանող.
Խոսկըս առակով իմացի, Լո՛ւսնաստըղ, փուզուլ սըպանող.
Բացվիլ իս բաղի միչումը, կա՛րմիր վարթ, բըլբուլ սըպանող.
Կըտրիլ տու՝ քանի կըտրում է քու թուրը՝ սարդարի բաբաթ:

Յա՛ր, ինձ մե ճանփա կանգնեցու՝ կենամ խաթըրջամի նըման,
Գիշիր ու ցերեկ լալիս իմ, աճկիրըս է նամի նըման.
Թուղ դըռանըդ նընգած ըլիմ օտար բարեկամի նըման.
Անգալին աստված սըպանե, Փահրադ-Շիրին՝ ղարի բաբաթ:

www.a-pdf.com

Գարնան շընչի ծաղկի ընման կարմիր վարթը բաց է ելում.
Ի՞նչ օքուտ է քու բաղմընչուն, վուր բըլբուլը լաց է ելում.
Պըռոշեմեդ միղր է կաթում, թողնիս՝ յախեդ թաց է ելում,
Էնդու համա քաղցր իս խոսում՝ լիզուդ է շաքարի բաբաթ։

Մարթ իր խոսկով կու ճանաչվի, գուզե շահի վեզիր շինին.
Բեդասլը ասըլ չի դառնա, թեգուզ վեքիլ, նազիր շինին.
Թե կամենաս ամենան տիղ քու ասածըդ հազիր շինին,
Սա՛յաթ Նովա, խոսկըդ ասա բ̣ելլու՝ քամանդարի բ̣աբաթ̣.

www.a-pdf.com

ՀԸՆԴԿԱՑ ՔԱՂԱՔԻՑԸ ՀԱՆԱԾ

ԽԸ (46)

Հընդկաց քաղաքիցը հանած, ջավահիր քար արմանալու,
Ինչի դիպչիս նաղըշ կոնիս, օսկե փարգալ արմանալու.
Ամեն մարթ չի կանա ճարի շահով շըքար արմանալու.
Մարթ հիդըդ չի կանա խոսի, Ռոստոմի Զա՛լ արմանալու:

Ծիմշատի ծառ բահամ էկած, շենքըդ տաշիլը ի՞նչ կոնե.
Էրանի է քու տիրուչը, յադին յաշիլը ի՞նչ կոնե.
Էրեսըդ խասա մուրասա՝ ղալամ քաշիլը ի՞նչ կոնե.
Կարմիր ու կանանչ ու ճերմակ, սարիսար ա՛լ արմանալու:

Դուն հիշտ ղիմիշ անելու չիս, ճըրաք վառած, դըժար ճարած.
Օվ օր էրեսըդ կու տեսնե, խիլքը կու դառնա շըվարած.
Անգին յաղութ, անգին ալմաս, բոլորքըդ ջավահիր շարած,
Սկանդարի Զուլղարեն թողած՝ ջընաղ հեքալ արմանալու:

Համաշա սեյրան իս անում, վարթ ու մանուշակ քաղում իս,
Ծուշա-բըրոլե գուլաբդան բերնեդ վարթաջուր մաղում իս.

www.a-pdf.com

Թաքավորի թաջի ջիղա, օսկե թիլրդ շաղմաղում իս.
Հուրսուրդի ձեռիցը փախած ջեյրան, մարալ արմանալու։

Յա՛ր, քիզանից հիռանալը մեռնելուս վըրա դըժար ա.
Էշխիցը Մեջլում իմ դառի, ի՞նչպես անիմ ինձի չարա.
Ավելի չէ Սայաթ Նովեն՝ քիզի ծառա ու նոքար ա.
Նըրանից ձեռքը քաշիլը՝ շատ ա էտ, [լա՛լ] արմանալու։

www.a-pdf.com

ԿԻՍԱՄՈՒՐԱԶ ՄԻ՛ ՍԸՊԱՆԻ

Էսպես լավ գարեհլիի ձայնով է*:

ԽԹ (45)

Կիսամուրազ մի՛ սըպանի,
Զունքի արիր սեր, նազա՛նի,
Թե քիզ ավել յադ յար սիրիմ,
Ումբրըս չանիմ խեր, նազա՛նի:

Աշխարումըս [դուն իմ] ջան իս,
Դուն իմ շահ իս, սուլթան, խան իս,
Ի՞նչ կուլի միզ մըտիկ անիս
Հազըրեն մե ջեր, նազա՛նի:

Ղարիբ դավրիշ իմ, հաջ չունիմ,
Գըլխիս էրծաթե թաջ չունիմ,
Յիս քիզ ավել իլլաջ չունիմ,
Դուն դառի ինձ տեր, նազա՛նի:

---

* Եոգչի որդի Օհանի ծան.:

www.a-pdf.com

Կըրակ տըվիր՝ կրակեն ավել,
Զախմախ էլ ունիս դուն, ցավ էլ
Աշխարումըս քիզնից ավել,
Օ՞վ ասավ՝ թե կէր, նազա՛նի։

Սայաթ Նովեն իմ, ճար չունիմ,
Յիս վարթեմեն [մե] խար չունիմ,
Թե դուն ասիր՝ յադ յար չունիմ,
Իղրարըդ էտ էր, նազա նի։

www.a-pdf.com

ԽԱԲԱՐ ԳԸՆԱՑ ԲԼԲՈՒԼԻ ՄՈԴ

Ծ (52)

Խաբար գընաց բլբուլի մոդ. «Վարթը քու գալուն մընում է.
Ճուխկընիրը բացրացիլ է, վրրեն շուռ գալուն մընում է.
Առավուտուց զանգակի պես քաղցրը ձեն տալուն մընում է»:
Բլբուլն ասաց. «Չիմ կանա գա, պուճպուճեն լալուն մընում է»:

Վարթը ասաց. «Իմ բլբուլին ալ պուճպուճեն վո՞ւնց կու խաւսե.
Թե խիլք ունիս, ՝ղարիբ բլբուլ, է՛լ քու բաղի ճանփեն չափե»:
Քանի գուզե քընած տիղը իր թշնամին կուռը կապե,
Էլի վիրչումը մեյդանը Ռոստոմի Զալուն մընում է:

Վարթը ասաց. «Խա՛յին բլբուլ, նալլաթ էտ քու էհտիբարին,
Անց կացավ ապրիլ-մայիսը, մեկ օր չը հարցընրիր յարին»:
Չէթուղ թե մուրազին հասնին, տե՛ս ի՞նչ արավ քավթար ղարին,
Փահրադին քլունգը սըպանից, Ծիրին՝ խանջալուն մընում է:

Աշխարումը վարթն է էլի բլբուլների սիրեկանը.
Բլբուլի լիզվով իմ ասում, տե՛ր, պահե վարթի ընմանը.
Աշխարումըս քանի սաղ իս, Սայաթ Նովի գերեզմանը՝
Շահ-Աբասի լալի ընման՝ շահի վրեն գալուն մընում է:

www.a-pdf.com

ՓԱՀՐԱԴԸ ՄԵՌԱԾ, ՇԻՐԻՆՆ ԱՍԱՑ

Էս մուսաադասի ձևնով է, շատ լավն է, Սայաթ Նովայի ասած*:

ԾԱ (48)

Փահրադը մեռած, Շիրինն ասաց՝ ղարեն էրված իմ.
Քաշվիլ է վարթը, մոդ չի թողնում, խարեն էրված իմ.
Բլբուլը ասաց՝ վարթիս խաթրի քարեն էրված իմ.
Տասնումեկ ամիս մունջ իմ կացի՝ տարեն էրված իմ.
Աստված կու սիրիս, զար մի՛ հաքնի, զարեն էրված իմ,
Մեջլումի նըման ման իմ գալի, յարեն էրված իմ:

Չը կա փաչայի խազինումը մալ քիզի լայիղ.
Հալա չին գործի Քիրմանումը շալ քիզի լայիղ.
Օսկե մատնումը դուն դրրիլ իս լալ քիզի լայիղ.
Հաքիլ իս ատլաս, ռանգը գուլգազ-ալ քիզի լայիղ:
Աստված կու սիրիս, զար մի՛ հաքնի, զարեն էրված իմ,
Մեջլումի նըման ման իմ գալի, յարեն էրված իմ:

Երգչի որդի Օհանի ծան.:

www.a-pdf.com

Խոսկիրըդ քախցըր, լիզուդ շաքար, շարթի միչումը.
Գարունքվան ծաղիկ, բաց իս էլի մարտի միչումը.
Մազիրըդ ռեհան, փաթըթված է վարթի միչումը՝
Կանանչ տերեվեն նամ չի կաթի զարթի միչումը.
Աստվաձ կու սիրիս, զար մի՛ հաքնի, զարեն էրված իմ,
Մեջլումի նըման ման իմ գալի, յարեն էրված իմ:

Սայաթ Նովեն իմ, էնդուր գու լամ, դարդիրըս արբաբ.
Մազիրըդ ռեհան, կըլապիտոն, հուսիրըդ շարբաբ.
Բարակ ղամաթիդ խիստ սազ գու քա դիբա ու զարբաբ.

. . . . . .

Աստվաձ կու սիրիս, զար մի՛ հաքնի, զարեն էրված իմ,
Մեջլումի նըման ման իմ գալի, յարեն էրված իմ:

www.a-pdf.com

ԱՅԲ ԱՍՏՎԱԾ ՍԻՐԻՍ

Էս այբբենական ղարահեջա է*:

ԾԲ (50)

Ա ՅԲ աստված սիրիս, ԲԵՆ բարի կացի.
ԳԻՄ գագաթը դարա ԴԱ ու **այիբ թո.**
ԵԶ էրանի չը կա ԶԱ զալում մարթուն,
Է ԸԹ էրեսիդ դի ԹՈ ու **այիբ թո:**

ԺԷ ժամանակ հասավ ՝ճկիրը լալու.
ԻՆ ինձի գըցեցիր դարդը վուխալու.
ԼՅՈՒՆ լալով իմ յիս աշխարը մընալու.
Էնդուր վա՜խ քաշեցի ԽԷ ու **այիբ թո:**

ԾԱ ծովումը մընաց, դուս չեկավ նավը.
ԿԵՆ կամով ավելցրիր քու սըրտի ցավը.

---

* Օհանի ծան.:

www.a-pdf.com

ՀՈ համաև կաևչում իս ՁԱ ձայևով դավրդ.
ՂԱԹ ղաբուլ կաց՝ ճարիս ՃԷ ու այիբ թո։

[ՄԵՆ, ՅԻ, ՆՈՒ, ՇԱ, Ո[վո] ՉԱ,
ՊԷ, ՋԷ, ՌԱ, ՍԷ, ՎԷՎ, ՏՒՈՒՆ*]։
ՐԷ-ՐԸՆ ՑՈ ցամքիլ է, ՀՅՈՒՆ հուևար ունի,
ՓՅՈՒՐ փակեցին դուռը, ՔԵՆ շրքար ունի
Եվ Օ ՖԵՆ կարթալու ա՛ստվաձ ճար ունի,
Հալալ Սայաթ Նովուև՝ կեն ու այիբ թո։

* Ենթադրվում է, որ պակասում է երկու տուն։

www.a-pdf.com

ԱՅԲԸԲԻՄԸ ԿԱՐԹԱՑԻԼ ԻՄ

Էս հայերեն թեջնիս է*:

ԾԳ (51)

Այբբիմը կարթացիլ իմ դասեդաս,
Հասա **ռա** է, հա **ջէ, հասա վէ**
Անգրրծակի մե ձեն էկավ դասեդաս,
Անգաճ կալա, չիմացա ինչ **հասաս է:**

Հազար տարին մարթու աճկին **թաքավուր.**
Քանի տընանգ, քանի հարուստ, **թաքավուր,**
Չի հարրցնի ախկատ, հարուստ, **թաքավուր,**
Մահը վուր կա, առանց [կըշիոք] **հասաս է:**

Դառնացավ, թրթվեցավ կինքրս **ծովացավ.**
Ա՜խ քաշելեն սիրտրս ընգավ **ծովացավ.**
Կաթելով, կաթելով դարդրս ծովացավ,
Մե մարթ չը կա, վուր ինձ խրրատ **հասասե:**

Հազար տարին մարթու աճկին **քարասուն.**
Օ՞վ է մնացի աշխարումրս **քարասուն.**
Սա՛յաթ Նովա, տարիդ էլավ **քարասուն,**
Դուն մահի հիդ, մահը քիզ հիդ **հասաս է:**

---

* Օհանի ծան.:

www.a-pdf.com

ՄԸՏԱ ԷՇԽԻ ՔՈՒՐԵՆ

Էս հայերեն Ղարահեջա է*:

ԾԴ (49)

Մըտա էշխի քուրեն խալիս դառնալու,
Սիրտըս էլավ քէ ու այիբ, էրկու բեն,
Կամավ սովդեն մըտա դարդը բառնալու,
[Էղ] ո՞ւմ բըռնիմ սէ ու այիբ էրկու բեն:

Դադա պիտի խոսկը ղադիմի շինե.
Ծարբաբի միչումը խամ թիլ չը հինե.
Զորու նըմանն չասե՝ իմ դեդեն ձին է,
Մարթ վուր ըլի նու ու այիբ էրկու բեն:

Ինչպես վուր կըրակին չի դիմանա մում,
Էնպես սախաթ կուլի, օվ օր խոսի հում.
Սայաթ Նովեն ասաց՝ էնդուր չէ պակսում
Էրկու աճկես էրկու այիբ, էրկու բեն:

---

* Օհանի ծան.:

www.a-pdf.com

Կապիտալիզմ

www.a-pdf.com

ԹԱՔԱՎՈՒՐ ԻՍ, ԴԻՎԱՆՍ ԱՐԱ

ԾԵ (54)

Թաքավուր իս, դիվանս արա, յա՛ր, քու արիվը կու սիրիս,
Նահախ տիղը մի՛ բարգանա, շա՛ր, քու արիվը կու սիրիս,
Կարմիր վարթըս մի՛ փուլ ածիր, մա՛ր, քու արիվը կու սիրիս,
Ուր օր գընաս՝ ինձ էլ հիդրդ տա՛ր, քու արիվը կու սիրիս։

Վարթը էյվընումը կուլի, նամ-նամ արխին սազ ըլիլով,
Կանանչ փոթոլը բաց կուլի կարմիր ու գուլգազ ըլիլով,
Զուրս բոլորքը ծաղիկներ ին, ճանփին փիանդազ ըլիլով,
Վարթը ակռավին շանց մի՛ տա, խա՛ր, քու արիվը կու սիրիս։

Վարթը մայիսին բաց կուլի, փոթոլը կու տանի խեչը,
Քանի վուր գուզե թըռմըշկի, պետկական է վարթի չեչը,
Քիզ օսկե ամբարչա պիտի, մի՛ նըստի պըղնձի մեչը,
Օ՜վ ջավահիր, անգին ալմաս քա՛ր, քու արիվը կու սիրիս։

www.a-pdf.com

Ակռավը բըլբուլ չի՛ դառնա, քանի գուզե վուր ա՞խ անե,
Ամեն ըռանգ ծաղկի մեչը՝ կարմիր վարթը սիրեկան է,
Գ·ուղ մարթը ման գալով գու քա, ձիք կու տա տառկեն կու հանե,
Մի՛ թողնի ճուխկըդ քաղիլու, ծա՛ռ, քու արիվը կու սիրիս:

Բըլբուլը սարեմեն գու քա, իր լիզվովը բաղ կանչիլով,
Ակռեքըս վեր թափեցավ՝ վարթի համա ա՞խ կանչիլով,
Սայաթ Նովեն, վուր բեզրիլ է, շատին էրեց խաղ կանչիլով,
Սրտումըս կա ինթիզար-իղրա՛ր, քու արիվը կու սիրիս:

www.a-pdf.com

ԳԵԼՆ ՈՒ ՉՈԲԱՆԸ

ԾԶ (58)

Գելն ու չոբանը մեկմեկու ռաստ էկան.
Գելն ասավ. «Բարով տեհա, չոբան ախպեր»:
Չոբանն ասավ. «Ցիս քու բարովն ի՞նչ կունիմ.
Վո՛ւնց քու խերը գուզիմ, վո՛ւնց շառը, ա՛նդեռ

Գելը՝ն ասավ. «Մուլափ կու տամ, վուր մը՝թնի,
Ուսուլով ման գու քամ, բինեդ կու գը՝թնիմ.
Քու շը՝ներու հաչոցեմեն չիմ խը՝րթնի,
Առուտեհաճ խերն ու շառը շանց կու տամ»:

Չոբանն ասավ. «Հենց գիդիս՝ ղուրթ քո՞ւն ունիմ,
Մե աճկը՝ս-անգաճը՝ս քու կը՝ռնումն ունիմ.
Ամեն ոոչի գլխին մե-մեկ շուն ունիմ,
Առուտեհան քիզ թամաշան շանց կու տամ»:

Գելը՝ն ասավ. «Վուր ամբը գա ծը՝մակին,
Ակռեքը՝ս կու գը՝ցիմ ոոչի դը՝մակին,

www.a-pdf.com

Կեսը կու խիխտիմ, կեսն էլ իմ քամակին՝
Մե-մեկ, մե-մեկ սարի ծերին շանց կու տամ»:

[Զոբանն ասավ. «Գիդիս անդեր մա՞լ ունիմ],
Ճըտիդ համա էրկըթե կըրկալ ունիմ.
Թե վուր ճանգըս ընգար, յիս իղբալ ունիմ,
Կոմբլիս տակին կընձկընձալը շանց կու տամ»:

Սայաթ Նովեն ասավ՝ յիս կարմիր կով իմ,
Կովկիթըս կոտռել իմ՝ հարսից խըռով իմ,
Գիլի հիդ բան չունիմ, չոբնին կու գովիմ,
Մե գամ էլա մածնի համը շանց կու տամ:

www.a-pdf.com

ՄԱԽՈՒԽՆ ՈՒ ՕԽՉԸՐԻ ՄԻՍԸ

ԾԷ (59)

Մախուխն ու օխչըրի միսը կըովեցան,
Ամեն մեկը գովում ին՝ մազեն յիս իմ,
Քու մեչն ի՞նչ ղուաթ կա, ի՞նչ իս դուս տալի,
Մարթու ղուաթ տըվողն ու փազեն յիս իմ:

Մախուխն ասավ. «Օխտը շափաթ պաս ունիմ,
Գըլխիս ծառա օխտը նորահարս ունիմ,
Համիմ, սրխտուր, պիտնա ու պրռաս ունիմ,
Աթամորթու սըրտի մուրազըն յիս իմ»:

Օխչըրի միսն ասավ. «Իմ մեչն է համը,
Կու դնին փըլավումը՝ կու քաշին դամը.
Ինձ մաթլաբեն կոծին, քիզ կոծին ջամը,
Ջիգրու կու պատռեցնիմ, քու ջազեն յիս իմ»:

Մախուխն ասավ. «Քանի փըքվիս պատրովիս,
Գիտի վուր պաս պահիս, հազար փըշրըվիս,

www.a-pdf.com

Միխկիրդ դարց գաս ու պիտի հաղորթվիս,
Դըշուխկի ու դըրախտի ղազեն յիս իմ»:

Օխշըրի միսն ասավ. «Պակսիլ է օրը,
Դիփ քիզ ին գովում՝ քաչալն ու քոռը,
Քիզ կու քոռացնե իմ մատղի զօրը,
Լավաշում փաթաթած թավազեն յիս իմ»:

Սայաթ Նովեն ասավ. «Խոմ գի՛դիք՝ օց իմ.
Գուզիք էրկսիդ մետի, մեբաշ սըղոցիմ.
Կու վիկալնիմ յիս ձիզ մութ տիղը կոծիմ,
Կոխպեքը կու դընիմ՝ ձիր ռազեն յիս իմ»:

www.a-pdf.com

ԱՍՏՈՒԾ ԽԻՍԼ ԱՐԻՑ

ԾԸ (64)

Աստուած խիսլ արից, սըվթա
Ստիղծից նախ մարթըն **Աթամ.**
Աթամի կուղեմեն քաշից,
Յիվան տըվից նըրան **համդամ:**

Համդամ գուզիք՝ է՛ս ձիզ ղարար՝
Տերըն ասաց չուտիք էս բար,
Թե չէ կու տեսնիք մինձ զարար,
Վուր առիլ իք էս պըտղի **համ:**

Համ առնիլը ուզից նախամար Յիվան,
Զարը գըթավ նըրան, տըվին իրար **կամ:**

[**Կամով** նընգավ չարի թոռը],
Քաղից արքիլված **խընձորը,**
Խափից Աթամ նախահորը,
Կերան ու դառան **մերկանդամ:**

www.a-pdf.com

Մերկացան ու ամանչեցին,
Փոշման դառան ու լացեցին,
Տերը վուր էկավ՝ խափեցին,
Թե՝ օցը էր արավ **սրթամ:**

Սրթամ արից տերն էլ, քըշից դըրախտեն,
Քանի վուր պատվիրքը չըպահին **թամամ:**

Թամամ մութ բըռնից աշխարը,
Ի՞նչ է Աթամ-Յիվի ճարը.
Սատանեն գըթավ հընարը,
Ասաց՝ գուգի՞ք ձիզ լուս **կու տամ:**

Կու տամ ասաց՝ գիրը արավ,
Հորդանանու գիդը տարավ.
Աթամ վուր էտ շարթը արավ,
Նաթիջում դըժուխկ գընաց **ջամ:**

Ջամ հազար տարի անց, տերն էկավ աշխար,
Ազատից հոքիքը, բան չը թողից **քամ:**

Քամ ու նիղ օրիր տեսան շատ.
Օվ ունեցավ հուս ու հավատ,
Իդրարին մընացող հաստատ,
Տերը կու հիշե ամեն **ժամ:**

Ժամընն ու ժամանակն է նիղ.
Մահը գու քա ամենան տիղ.
Կու լինի դադաստան ահիղ.
Աղաչիմ փըրկըչին՝ **հուսամ:**

Հուսամ, Սա՛յաթ Նովես, միխկիրըս քավիմ,
Թե չէ դադաստանին յիս ի՞նչ ջուղաբ տամ:

www.a-pdf.com

ՍՈՒՍԱՆ ՍԸՆԲՈՒԼ ԴԱՍՏԱՄԱԶԸԴ

ԾԹ (65)

Սուսան սընբուլ դաստամազըդ էրեսիդ խափանգ իս արի,
Կավիրըդ օլոր տար ու բիր, արայիշ գուլ հանգ իս արի:

Հանգ իս արի, յա՛ր, ա՛ յար,
Սիրտըս արիր յարա, յա՛ր,
Գըլուխըս մատաղ կոնիմ՝
Ղաբուլ անիս, յա՛ր, ա՛ յար:

Ումբրիս լարը ձըգիլ ղադանգ իս արի,
Վայ թե կըտըրվիլ է ղափիլ, յա՛ր ա յա՛ր:

Աճկիրըդ ծով, էրեսըդ շովդ, էշխըս լուդ կուտա անղայիդ,
Անքանար ջուրըն իս գըցի, բոլորքըս տալդա, ջըրհիդիդ:

Ջըրհիդիդեն **Նոյ այիբ,**
Վուր փըրկըվից **նու այիբ,**
Նոյին գեմին ազատից,
Ինձ՝ **այիբն ու նու այիբ:**

www.a-pdf.com

Սե-մեկ ինձի տիսուդ թե անին լայիդ,
Կու կենամ ջամալիդ մայիլ, յա՛ր, ա՛ յար։

Հասրաթեդ չոլիրը ընգած, Մեջլումի պես Էյլու զայաթ.
Յարալու ջեյրան իս դառի, յիս քու էդնեդ՝ ավչի-սայադ։

Սայաթ Նովեն իմ, սայադ.
Անումը հաշվիր՝ սայ-ադ.
Տիսուդ կարոտ չը թողնիս,
Զասիս՝ սա օտար, սա՝ յադ։

Կամ թե՝ գուրձավուր իմ, բեքարա խայաթ,
Ամաճը՝ ինձ չի լի վայիլ, յա՛ր, ա՛ յա՛ր։

www.a-pdf.com

ՀՈՒՐ ԻՍ ԷՇԽՈՎ ԿԸՐԱԿԱԾ

Կ (56)*

Հուր իս՝ էշխով կըրակած,
Խոսկ իմ ասում առակած,
Իմ սիրմա-էրծաթ ախպեր՝
Օսկեջըրով վարակած:

Հանփուրիմ՝ սիրով հանփուր,
Վունց օր խեչին է դաստուր.
Օվ քիզ խայան մըտիկ տա՝
Դառնա էրկու աճկով կուր:

Վուր յիս ասիմ՝ իմացի,
Էշխի մեչը հիմնացի.
Ինձ հուրյան-բիրյան արիր,
Ասում իս թե՝ դիմացի:

---

* Տես՝ խաղ ԺԱ(13): Ծ. խ.:

www.a-pdf.com

Հուր իս, սիրով, սիրակաւն,
Քիզի ղուլլուղ պատվական,
Հազար թուրլու կերակուր,
Սուրփ գինի անապական:

Պըխտուր սիրտըդ պարզ արա,
Բլբուլի պես փարզ արա,
Ասըձուն փա՛ռք, քաղկումն իս՝
Դարդըդ խանին արզ արա:

Արզ իս անում հազարին,
Հա՛ զարբաբին, հա զարին.
Սիրտըս յարալու արիր՝
Սեճկըս գու լա հա՛ զարին:

Հազ [արին] հազարի պիտի,
Էրած սըրտին ճար պիտի,
Ցիս մե էշխի ջունուն իմ,
Ինձ մե դողրու յար պիտի:

Յարի լիզուն բըլբուլ է,
Դաստամազը սնբուլ է.
Սայաթ Նովեն լալիս է,
Մագա՞մ ղարիբ բըլբուլ է:

www.a-pdf.com

ՀԻՄՔԸԴ ՎԵՐՍՏԻՆ ՆՈՒՐԵՑԻՆ

ԿԱ (62)

Հիմքըդ վերըստին նուրեցին, չաղ արին, Մողնու սուրփ Գեվուրք.
Քար ու կիրըդ օխչարի կաթ շաղ արին, Մողնու սուրփ Գեվուրք.
Աչ ու ձախ կախեցին՝ բրոլե ճաղ արին, Մողնու սուրփ Գեվուրք.
Ցիրգնոց լոսը վըրեդ կամար-թաղ արին, Մողնու սուրփ Գեվորք:

Պատիրըդ կարմիր ագուրով, սընիրըդ տաշ մարմար բարով,
Հընդու միչեմեն դուս էկած վարաքուրրդ՝ ղալամքարով.
Թագիրըդ անգին ակնիրով, ըզգիստրդ զարբաբով, զարով.
Բիմըդ ու խաչկալըդ դրախտի բաղ արին, Մողնու սուրփ Գեվուրք:

Վիրնատունդ ուանդալե տախտակ, ռանգրն է տորոնի նրման.
Հոքով ու մարմնով կու սըրփվի, օվ քիզ գու քա մոնի նըման.
Տապանակ ուխտի կըտակավ խորանդ Ահարոնի նըման.
Միաբանքըդ քաղցրը ձայնով տաղ արին, Մողնու սուրփ Գեվուրք:

Ամեն բորոտը կու սրփվի, քիզի գու քա օվ փափակով*...

[1751]

---

* Այս տողը ջնջված է հեղինակի կողմից:

www.a-pdf.com

ԱՇԽԱՐԵՄԵՆ ԲԵԶԱՐԻԼ ԻՄ

ԿԲ (67)

Աշխարեմեն բեզարիլ իմ, էլ բերնումը համ չըկա, չէ՛,
Թառամիլ է սրտիս վարթը, սափա, զուղ ու դամ չը կա, չէ՛,
Ամեն մարթ իրան է քաշում, դարդիման համդամ չը կա, չէ.
Բոլորքըս ղամքաշ ին դառի՝ ուրախ սիրտ անգամ չը կա, չէ՛։

Դառը խոսկով սիրտըս խուցից, վադի ձեռնեմեն գու լամ յիս,
Ղոստիրըս դուշման ին դառի, յադի ձեռնեմեն գու լամ յիս—
Մեկ չէ, էրկու չէ՝ աշխարում շատի ձեռնեմեն գու լամ յիս.
Էհտիբարը վիրացիլ է, ասկ ու բարեկամ չը կա, չէ՛։

Է՛յ ադալաթ, հուքմի-հեքիմ, սուչըս ի՞նչ է, ա՛սա ինձի.
Վուր հաքցըրիր իմ չուզեցած սիվ ու սուք լիբասըն ինձի.
Խ'ըմցըրեցիր անմիղ տիղը, էս աղուի թասըն ինձի,
Հոքուդ մեչ ինեափ, սըրտումըդ շընուք ու քարամ չը կա, չէ՛։

Թե ռուխսաթ տան, սիրտըս բանամ, կու տեսնիք դարդիրրս ծով ա.
Դովրանեմես դուս ին գըցի, իմ տիղըս բըռնողն օ՛վ ա,
Ասում ին՝ տարսըդ թամամից, լա՛ց ու վուխտա, Սա՛յաթ Նովա,
Հե՛յ վախ, էլ ձեռիս քամանչա, մեջլիսումը ջամ չը կա, չէ՛։

www.a-pdf.com

ԻՂԲԱՐ ՈՒ ԱՄԱԳ ՉՈՒՆԵՑՈՂ

ԿԳ (68)

Իղբար ու ամագ չունեցող յարի ձեռնեմեն դադ կոնիմ,
Բլբուլին վարթեմեն զըրգող խարի ձեռնեմեն դադ կոնիմ,
Մարթուս էհտիբար չը մնաց, դարի ձեռնեմեն դադ կոնիմ
Դիփ խառնակիչ ու ավիրող չարի ձեռնեմեն դադ կոնիմ:

Էլ հոքեվախ կըրոնավուր, մարթասեր իշխան չը մնաց,
Զօրը անզօրին կերիլ է, մարթկանց վըրա ջան չը մնաց,
Էս զամանի գոզալներուն ախրաթ ու իման չը մնաց,
Քանի՞ կանչիմ դադ ու փիրյադ, զարի ձեռնեմեն դադ կոնիմ

Փիքր ու խիալըս հարգան աշխարքի ցավի մասին է,
Խիղճի, նաչարի, տընանգի, բարու ու լավի մասին է,
Սայաթ Նովու խոսկը իրավ ու անիրավի մասին է,
Յոխսուլին զըրգող, բենիսափ վարի ձեռնեմեն դադ կոնիմ:

www.a-pdf.com

ԱՄԵՆ ՄԵ ՄԸՏԻԿ ՏԱԼՈՎ

ԿԴ (66)

. . . . . .

. . . . . .

Ամեն մե մըտիկ տալով ինարար խիլքըս, քամ'ալոս,
Է՜յ, ճազանի, ռահմ արա, դուն մի՛ դառնա աջալըս.
Հենց ձեռովըդ կապեցիր, էնպես բաց էր իղբալըս,
Էշխեմեդ հիվանդացա, չիս հարցընում իմ հալըս.
Քիզիքիզ մըտիկ արա, փոշմանիլու վախտըն է:

Իմ թալնիլը քու բանն էր, չասացիր ի՞նչ իս անում.
Սըրտով սիրածըս դուն իս, էլ ինչի՞ իս արմանում,
Ուրիշնիրու խոսկիրով կապած յարես յիդ անում.
Անկըս ճանապարիդ է, ինչի՞ իս շատ ուշանում.
Մե խալվաթ օթախումը բարիշիլու վախտըն է:

Քու պատվական գըլուխըդ դուն ավարա մի՛ անի.
Էս իմ խունի ջիգարըս հազար փարա մի՛ անի,
Իմ ու քու սըրտի բանը դիփ աշքարա մի՛ անի,
Արութինի շախ սիրտը մեկ էլ յարա մի՛ անի.
Կամով ու ճիտ անելով փաթաթվիլու վախտըն է:

www.a-pdf.com

ՄԱԶԻՐ ՈՒՆԻՍ ԴԱՍՏԱՌԵՀԱՆ

Էս Արութինի ասած է, իլլահի:

ԿԵ (60)

Մազիր ունիս դաստառեհան՝ նման սիրուն սուսառնի*.
Ունքիրդ ղալամով քաշած, սազում ին միր գումանին.
Թեթերուկդ նիտ ու նաշտար՝ դիբչում է միր քամանին.
Անկիրդ օսկե փիալա, կրակ դրից միր ջանին:

Վարթ էրեսիդ խալ իս դրի՝ **աստղի նման հավասար.**
Գունքդ Հնդստանի մում է, **ջանս արավ ղավար-ղավար,**
Լիզուդ քաղցր, բառդ քաղցր, **ակռքնիրդ անգին քար.**
Պրոշեմեդ միդր է կաթում, չի հասնում միր փինջանին:

Էրեսդ է արիվ-լուսին, **վիզդ է նման ղարդարի.**
Բուխարնիրդ կախ ին ընգի՝ **ինձ ամա չիս դարդ արի.**

---

* Երկլեզվյան այս խաղի և հաջորդ ձոնի (ԿԶ, 61) ընդգծած կիսատողերը գրված են հայերեն, չընդգծածները թարգմանված են ադրբեջաներենից: **Ծ. խ.:**

www.a-pdf.com

Կուռը դ շիշմաս, մատնիրը դ՝ **մում, դունգը դ արավ ինձ սարսարի.**
Գիշիր ցերեկ էշխի **մեչը** կախվիլ է միր դամանին·

Էնդու հասա ջունուն դառած **կանչում իմ ամա՜ն-ամա՜ն,**
Աճիլ է, ծաղկիլ է ծուցը դ, **հուտը գու քա աննման.**
Ղոշը դ դառած [բաղ ու բաղչա], **խալ է գցի շամամաս.**
Կու բխեցնե կաթնեախպուր, կանաչ չայիր չրմանին:

Թա՛րիւի արա, Սաւ յաթ-Նովա, **գոզալը աննման է,**
Մեճկը հադիդեսեն քաշած՝ **մարթու հոքի կու հանե.**
Ի՞նչ իս անում, ղա նլու մարալ, **էշխը դ ինձ կու սրպանե.**
Մի սրպանի հասուսթեմնդ, յի կ, տեր մի դառ միր արևին:

www.a-pdf.com

ՄՇՈՒ ՍՈՒԼԹԱՆ ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏ

Էս սուխամմազ է, Արութինի ասած:

ԿԶ (61)

Մշու սուլթան **սուրբ Կարապիտ,** երկինքն է հասյալ գովքը քո.
Գլուխ վարթապիտ ճշմարտության, չկար հավասար ոքը քո.
Խոսկիրըդ անգին ջավահիր, լալ էս թափյալ բերնոքը քո.
Որովայնե երգիրպաքիր, արմացյալ ին ծնողքը քո.
Անապատեն բարբառեցար, հրաշախոս շրթնոքը քո:

Գընացիր գետը Հորդանան, **տերընն ինքը մըկըրտեցիր.**
Տիրոջը դու ցուցիր մարդկանց **երրորդությունը հայտնեցիր.**
Յիս վասընն ալն ուրախ եմ շատ՝ **չար սատանեն կորցընցիր.**
Երեսուն ամ ի մեջ այրի, **վասն աշխարին աղոթեցիր.**
Մեղրը վայրի վայելիցար, շատ քաղցրը ին քարոզքը քո.

Գրյալ է ի մեջ սուրբ գրքի, **Օվաննես միծի ծնունդկանանց.**
Զարյամբ քո հոգիք փրկեցիր, **թագ ու պարծան իս կուսանանց.**

www.a-pdf.com

Հրիշտակնիրը՝ իջան յիրգնուց, **պրսակ լուսո առիր անանց.**
Խաչապաշտյաց հիմքն դառար, **աշտանակ իս ամեն վանանց.**
Մասունքդ ամեն տիղ ծավալի, ամեն տիղ է լուս-շողքը քո:

Կրոապաշտը քիզ հյուր կանչեց, **զօրս ամենայն յուր հավաքյաց.**
Բազմությունը եղև հուզյալ՝ **եխպոր ախչիկը չը խաղաց.**
Երդում կերավ գահի վերա, ի՛նչ որ ուզես, **կու տամ՝ ասաց.**
Մարգարեի գլուխը ցանկաց, **ջալլաթը շուտով գըլխայտաց.**
Օխտըն անում հիշատակեցին, որ կտրեցին շըլինքը քո·

Ի՞նչ հրաշալի կերպ ունիր դուն, **սանդարամիտը զօրոք սարսյալ,**
Տարտարոսը հայտնի արիր, **ավետիս համայն առաքյալ.**
Դըրախտի հրիշտակը՝ իս դուն, **սուրբդ սրբոց սիրտդ մաքրյալ.**
Սայաթ Նովան շատ կու ողբա, **աղաչում է երեսն անկյալ.**
Մեղավորաց մեղկը հալե, լուսով լի է տապանքը քո:

www.a-pdf.com

ԷՍ Ի՞ՆՉ ԷԼԱՎ ԻՆՁ ՀԻԴ

Էս ղափիան չորս լեզվով է՝ վրացերեն, պարսկերեն, թաթարերեն [ադրբեջաներեն], հայերեն*. Արութինի ասած է, մարտի 6, քրոնիկոնի 446ին:

ԿԷ (63)

Էս ի՞նչ էլավ ինձ հիդ, տե՛ս, ի՞նչ իմ արի,
Դե վիզը դուռ գնա, տանեն դուս արած.
Խիլքըս տանուլ տըված լիղնուրթ իմ դառի,
Գըժված ման իմ գալի, բանեն դուս արած:

Քաղցր թութըս դառը լիղի շինեցի.
Ցիս մի միխկ իմ արի՝ նշտար քաշեցի,
Իմ էն արթար կաթիս արուն խառնեցի.
Բաս էնդու համա իմ նանեն դուս արած:

---

* Վրացերեն՝ Ա տան 1-ին և 2-րդ տողերի 1-ին կեսը և մյուս տների 1-ին տողերը. պարսկերեն՝ Ա տան 1-ին և 3-րդ տողերի 2-րդ կեսը և մյուս տների 2-րդ տողերը. ադրբեջաներեն՝ Ա տան 2-րդ և 4-րդ տողերի 1-ին կեսը և մյուս տների 3-րդ տողերը: Ծ. խ.:

www.a-pdf.com

Յիս բլբուլ իմ, վարթըս փակից ալալը.
Տե՛ս ի՞նչ արից հուրիզ-պրա ջալալը
Կորցրիլ իս ջավահիրը ու լալը,
Մա՛դան չունիս, Բադեշխանեն դուս արած.

Հա՛ լաց էլա, վա՛յ կանչիցի անհաշիվ,
Էլ ի՞նչ օքուտ, ջան տուր, կինքըդ հա՞ մաշի,
Էս իմ դարդից թուղ վուր օչ օվ չը քաշի,
Օչ օվ չըլի սիրեկանեն դուս արած:

Ա՛յի, մի՛խկ իս, Սա՛յաթ Նովա, միղանչող.
Ախպոր ճանփին կինքըս մատաղ ըլի թող.
Սըրան ղաբուլ իմ արարիչ-ստիղծող,
Հոքիս չանիս դուսխտիջանեն դուս արած:

[1758]

www.a-pdf.com

ԷՍ ՐԱ՞ ՄԱՄԻՎԻԴԱ

(ԿԷ (63)* խաղի բնագիրը)

Էս ռա՞ մամիվիդա, բյուբին չի՞ քնրդնմ.
Վա՛ր գեթ, բո՛յնը բուրուզ, տանեն դուս արած.
Ճկվա ծավագեբինե, նզ շեշի նարդ նմ,
Դիվանա գնզիրամ, բանեն դուս արած:

Մե խոմ գավամծարե տկբիլի թութա.
Թաղսիրի մնն դարնմ, քնլնգի քութա.
Զունքի գաև գաթմիշամ օ շիրին սոնթա,
Բաս էնդո՛ւ համա իմ նանեն դուս արած:

Բուլբուլի վար, վարթս էփարա ալալի.
Բյուբին չի՞ քնրդ հուրիզադնա ջալալի.
Իթիրմիշնմ ջավահիրը վնա լալի,
Մա՛դան չունիս, Բադեշխանեն դուս արած:

---

* Փակագծերում թվանշաններով նշված են խաղերի նոր հրատարակությունները: Ծ. խ.:

www.a-pdf.com

Նիադագ վիտիրե, վիձախե վիշի.
Զի՞ ֆայդա՝, ջան դադանն, նամիրադ փի՞շի,
Բու դանրդ քի մանն չանքտըմ, չանքմանսըն քիշի՝
Օչ օվ չըլի սիրեկանեն դուս արած։

Մո՛դի Սայաթ Նովա, շեն ցոդվիլի խար.
Կուրբանադ միմիրամ—բահի բրադանր.
Բունա մանն գանբուլամ, է՞յ փանրվանրդիգանր,
Հոքիս չանիս դրախտիջանեն դուս արած։

www.a-pdf.com

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ա(1) Քամանչա 3
Բ(42) Թեգուզ քու քաշը մարքոիտ տան 5
Գ(16) Ա՛րի, ինձ անգամ կա՛լ 7
Դ(30) Վունց օր վուր ղարիբ բուլբուլը 9
Ե(31) Մե խոսկ ունիմ իլթիմազով 11
Զ(27) Մեջլումի պես՝ կորավ յարը 13
Է(21) Առանց քիզ ի՞նչ կոնիմ 15
Ը(10) Դուն է՛ն գըլխանն իմաստուն իս 17
Թ(8) Ցիս մե ղարիբ բուլբուլի պես 19
Ժ(9) Ուստի՞ գու քաս, ղարիբ բրլբուլ 21
ԺԱ(13) Խոսկիրրդ մալում իմ արի 23
ԺԲ(20) Շատ մարթ կոսև 25
ԺԳ(57) Ինձ ու իմ սիրևկան յարին 27
ԺԴ(33) Էնդուր աճկը չև ցամաքում 29
ԺԵ(41) Չի՛ս ասում, թե լաց իս ելի 31
ԺԶ(19) Ձենը դաղցը ունիս 33
ԺԷ(14) Էսօր իմ յարին սևսև 35
ԺԸ(24) Աշխարումը ա՛խ չիմ քաշի 37
ԺԹ(23) Ինձ սիրեցիր էշխլ նրնգար 39
Ի(26) Ի՞նչ կոնիմ հեքիմը 41
ԻԱ(34) Անգին ակը վըրդ շարած 43
ԻԲ(36) Էշխեմեդ հիվանդացիլ իմ 45
ԻԳ(4) Շատ սիրուն իս, Շախաթայի 47
ԻԴ(12) Ցիս քու ղիմեթը չի՞մ գիդի 49
ԻԵ(35) Թամամ աշխար պըտուտ ելկա 51

www.a-pdf.com

ԻԶ(15) Գուգիմ՝ ումբրրս հենց անց կացնիմ 53
ԻԷ(17) Դուն Է՛ն հուրին իս 55
ԻԸ(43) Աջաբ քու սիրտըն օ՞վ շինից 57
ԻԹ(5) Դարդ մի՛ անի, ջան ու ջիգար 59
Լ(7) Դիբա ու յինգիդունիա 61
ԼԱ(18) Էշխը վառ կոակ է 63
ԼԲ(37) Ա՛րի հատով ղուլլուղ արա 65
ԼԳ(3) Բլբուլի հիդ լաց իս էլի 67
ԼԴ(53) Աշխարըս մե փանջարա է 69
ԼԵ(2) Պատկիրքըդ ղալամով քաշած 71
ԼԶ(28) Էշխեմեն էնպես վատվիլ իմ 73
ԼԷ(44) Բեդասլին վուր խոսեցընիս 75
ԼԸ(38) Էշխեմեդ անդանակ էլա 77
ԼԹ(25) Աջա՞բ քանի ժամանակ է 79
Խ(22) Դաստամազըդ սիմ ու շարբաթ 81
ԽԱ(39) Յա՛ր, քիզ իսկի զավալ չըլի 83
ԽԲ(29) Քանի վուր ջան իմ 85
ԽԳ(40) Մոդրդ նըստողը կու հարփի 88
ԽԴ(6) Անգաճ արա բարիթավուր 90
ԽԵ(11) Ցիս կանչում իմ լալանին 97
ԽԶ(32) Խրմեցուր ձեռիդ թասեմեն 100
ԽԷ(47) Աճկ ու ունքրդ վեր իս թողի 102
ԽԸ(46) Հընդկաց քաղաքիցը հանած 104
ԽԹ(45) Կիսամուրազ մի՛ ըսպանի 106
Ծ(52) Խաբար գընաց բլբուլի մոդ 108
ԾԱ(48) Փահրադը մեռած, Շիրինն ասաց 109
ԾԲ(50) Այբ աստված սիրիս 111
ԾԳ(51) Այբըրիմը կարթացիլ իմ 113
ԾԴ(49) Մըտա էշխի քուրեն 114

ՀԱՎԵԼՎԱԾ

ԾԵ(54) Թաքավուր իս, դիվանս արա . . . 117
ԾԶ(58) Գելն ու չոբանը 119
ԾԷ(59) Մախուխն ու օխչըրի միսը . . . 121
ԾԸ(64) Աստուած խիալ արից 123
ԾԹ(65) Սուսան սընդրուլ դաստամազրդ . . . 125

www.a-pdf.com

Կ(56) Հուր իս էշխով կրրագաս 127
ԿԱ(62) Հիմքդդ վերբստին նուրեցին . 129
ԿԲ(67) Աշխարհանն բեզարիլ իմ 130
ԿԳ(68) Իդրար ու ամագ չունեցոլ 131
ԿԴ(66) Ամեն մեր մըտիկ տալով 132
ԿԵ(60) Մագիր ուեիս դաստաուեինան թարգմ. Մ. Հասրաթյան . . 133
ԿԶ(61) Մշու ռուլթան սուրբ Կարապետ » » » 135
ԿԷ(63) Էս ի՞նչ էլավ ինձ ճիդ — . . . » » 137
ԿԷ(63) Էս բա՞ մամիվիդա 138

www.a-pdf.com

Սայաթ Նովա

ԽԱՂԵՐ

Գեղ. խմբագիր՝ Ան. Վ. Գասպարյան
Տեխ. խմբագիր՝ Վ. Ս. Խալաթյան
Վերստուգող սրբագրիչ՝ Հ. Վ. Վարդանյան

Հանձնված է արտադրության՝ 19/VI 1968 թ.: Ստորագրված է տպագրության 4/III 1969 թ.: Թուղթ տպագրական № 1, 60×84 1/16, տպ. 9,0 մամ.=8,37 պայմ. մամ., հրատ. 3,3 մամ.+1 ներդիր, պատվեր 863, տիրաժ 20 000, գինը՝ 37 կ.:

«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91:

ՀՍՍՀ Մինիստրների սովետի մամուլի պետական կոմիտեի պոլիգրաֆարդյունաբերության գլխավոր վարչության № 1 տպարան, Երևան, Ալավերդյան փող. № 65:

www.a-pdf.com